

Երվանդ Գ. Տեր-Խաչատրյան

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ «ՆԱԻԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ» ՎԵՊԸ*

Բանալի բառեր – Արա Հերյան, Բաթում, նավ, լեռ,
Երևան, Սևան, «Ալբատրոս», Ջվարթ, Թումանյան, Միրանյան,
Քանաքեռ:

Մուտք

Կոստան Զարյանի եթե չասենք ողջ գրականությունը, ապա նրա մեծագույն մասը ուղղված է եղել իր ժողովրդի ինքնության խորքերի մեջ ներթափանցմանն ու ճանաչողությանը, հոգեկան կառուցվածքի բացահայտմանը, հայ մարդու ազգային գիտակցության ձևավորմանն ու հաստատմանը, վերջապես՝ հայ ժողովրդի հավաքական գիտակցության բյուրեղացմանը:

Թեպետ գրողը ապրել և ստեղծագործել է հիմնականում եվրոպական երկրներում և ոչ միայն քաջ ծանոթ է եղել եվրոպական գրականության 1920–1930–ական թվականների հոսանքներին ու մտայնություններին, այլև անձամբ ճանաչել է ժամանակի գրական շարժումների նշանավոր դեմքերին, այնուամենայնիվ իր գրականությունը հեռու և անմասն է մնացել եվրոպական նորագույն գրական շարժումներից թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ: Էսթետիկական և գրողական արվեստի առումով Կոստան Զարյանի գրականությունը, իհարկե, աղերսներ ունի ինպրեսիոնիստական և էքսպրեսիոնիստական գրականության հետ, բայց, այնուամենայնիվ, նրա գերագույն խնդիրը կապվում է հայ ժողովրդի պատմական ճակատագրին և ազգային հավաքական գիտակցության կայացմանը:

Վստահորեն կարելի է ասել, որ այդ մտքերն ու գաղափարները գրողին մեծապես զբաղեցրել են Պոլսից Հայաստան գալուց և Հայաստանից մեկնելուց ի վեր, ավելի ճիշտ՝ նման գաղափարները իր մեջ ծագել են հիմնականում Հայաստանում, երկիրը և ժողովրդին ի մոտո ճանաչելուց հետո: Այստեղ երկրի և հայրենիքի զգացողությունը դառնում է խիստ առար-

ԿՎԵՊ ԿԱՆԱԿԱՅԻՆԿԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԱՆ 3 (51) ԿՈՍՏԱՆ-ՆԱԿԱՅԻՆԵՐԵՐ, 2015

*Հոդվածն ընդունվել է տպագրության 3.06.2015:

կայական, շոշափելի, իրական և ստանում է բոլորովին նոր իմաստ և բովանդակություն: Արարատյան դաշտն ու Արարատ լեռը, Երևանն ու Սևանա լիճը, Հռիփսիմենն ու Ջվարթնոցը և հայրենի երկրի հազարավոր այլ մանրումեն իրականությունները որոշակիություն են տալիս գրողի մտքերին ու գաղափարներին, հստակում են նրա աշխարհընկալման ու աշխարհագագողության սահմանները՝ կապելով դարավոր հնություն և պատմություն ունեցող երկրի ինքնությանն ու նրան մատչելի ու ըմբռնելի դարձնելով երկրի բնագանցական ոգին: Այստեղ արդեն հասկանալի է դառնում, թե ինչու իր կյանքի հետագա տարիներին գրողի մեծագույն ողբերգությունը մնում է Հայաստանից պարտադրաբար հեռանալը՝ հարկադրաբար տարագիր, ո՛չ գաղթական, դառնալը:

Կոստան Զարյանը ողջ կյանքում հստակորեն զանազանել է Հայաստանին պարտադրված քաղաքական իշխանությունն ու կառավարման ձևը երկրից, ժողովրդից և հայրենիքից: Հայաստանի ու իր բնակիչների հանդեպ գրողի վերաբերմունքը վեր է ամեն ինչից և կարիք չունի բացատրությունների ու հավաստիացումների: Հայ ժողովրդի ներկան և ապագան գրողը միշտ էլ կապել է Հայաստանի հետ՝ անկախ քաղաքական ռեժիմի բնույթից: Եվ նրա մտածումներն ու ստեղծագործական ճիգը, տագնապներն ու սպասումները միշտ էլ ուղղված են եղել Հայաստանին:

Այդ ամենը գրողին հանգեցրել է իր վերջին մեծ խոսքը ասելու գաղափարին: Նա մեծ ասելիք ուներ և երկար նախապատրաստվել էր այդ ասելիքը՝ իր պատգամը հայությանն ուղղելու և ապագա սերունդներին հասցնելու համար: Գրել էր երկու մեծ վեպ՝ «Անցորդը և իր ճամբան» (1926–1928), «Բանկօսյը և մամուլի ոսկորները» (1931–1933) և ձեռնամուխ էր եղել «Երկիրներ և Աստուածներ» ընդհանուր խորագրով երկերը գրելուն: Շարքի երկու գրքերը՝ «Սպանիա»-ն (1935–1936) և «Միացեալ Նահանգներ»-ը (1936–1938), «Հայրենիք» ամսագրում հրապարակելուց հետո Կոստան Զարյանը ընդհատում է շարքը: Հեղինակը մտադրված է եղել գրելու ամնվազն ևս երկու կամ երեք գիրք, գոնե «Հունաստան»-ի և «Իտալիա»-ի մասին ակնարկություններ կան իր մի քանի գրառումներում ու նամակներում: Կոստան Զարյանը մտադրված է եղել գրելու նաև «Հայաստան»-ը: «Հունաստան»-ը և «Իտալիա»-ն չեն գրվել, այդ գրքերի հետ կապված որևէ բան մեզ հայտնի չէ: Գրողի արխիվում հավանաբար ավելի ճշգրիտ տեղեկություններ լինեն: Բայց ստույգ է, որ գրողը մտադրված է եղել գրելու այս երկրների մասին, իր մի քանի նամակներում այդ մասին ակնարկներ կան:

1930-ական թվականների կեսերից Եվրոպան, ուր հանգրվան էր գտել գրողը, ապրում էր քաղաքական աննպաստ ու տենդագին կյանքով: Եվրոպական մտավորականությունը՝ նշանավոր գիտնականներ, գրողներ, նկարիչներ, երաժիշտներ, արվեստագետներ, մայրցամաքը բռնած դարչնագույն ժանտախտից խուսափելու նպատակով հեռանում էր Եվրոպայից, մեկնում Հարավային Ամերիկա, Հյուսիսային Ամերիկա, այլ երկրամասեր ու երկրներ...

Եվրոպայում աճող ահն ու տագնապը ավելի շոշափելի են դարձնում հայրենագուրկ հայ գրողի ողբերգությունը, տարագրության դատապարտ-

ված հայի իր դրաման դարձնում առավել ընդգծված:

«Սպանիա»-ն¹ և «Միացեալ Նահանգներ»-ը² ազատ ու խաղաղ հայեցումի, քննական-վերլուծական գնահատող և արժևորող հայացքի արդյունք էին: Հայաստանից հարկադրված հեռանալուց հետո գրողը գրական-ստեղծագործական հոյակապ վերելքով՝ «**Tour de Babel**» («**Քարելոյան աշտարակ**») հանդեսով, Հոլանդիայում հայ արվեստին ու մշակույթին նվիրված դասախոսություններով, երկու վեպով և «**Երկիրներ և Աստածներ**» շարքով, բազում էսսեներով և հոդվածներով, կարելի է ասել, հաղթահարել էր հայրենագուրկ տարագրի ճգնաժամային ու տագնապալից իր վիճակը և հասել որոշակի կայունության ու ներքին խաղաղության: Եվ ահա նորից տագնապ, ահ, սպասում և նորից կյանքի սպառնալից վիճակ: 1930-ական թվականների կեսերից հետո գրված բանաստեղծությունները և մանավանդ «**Տարագրություն**» անտիպ պոեմը գրողի ապրած նոր հոգեկան դրամայի վկայությունն ու արտահայտությունն են:

Ուրեմն, Զարյանն ասելիք ուներ և մեծ ասելիք, որ տարիներ շարունակ արծարծել և մշակել էր իբրև ազգային կեցության և մտածողության անհրաժեշտ ու պարտադիր գոյության ձև, իբրև ազգային կենսափիլիսոփայություն, որ ոչ միայն բխում է անցյալ դարերի հայ պատմության ու ինքնության և մանավանդ ժողովրդի հոգևոր հարստության՝ հայ մշակույթի ներքին տրամաբանությունից, այլև արդի կյանքի և իրականության թելադրանքից, բայց և ձևավորվում է ազգային ապագա կյանքի կառուցողական հրամայականով: Եվ իր այդ մեծ ասելիքը նա ամենից առաջ հասցեագրում-ուղղում է Հայաստանի ընթերցողին: Տեսնենք, ուրեմն, թե որն է գրողի մեծ խոսքը:

* * *

...Դեռևս 1919 թվականի հուլիս-հոկտեմբեր ամիսներին իտալական մի քանի թերթերի հատուկ թղթակցի հանգամանքով³ Կոստան Զարյանը հասնում է Կովկաս և հոկտեմբերին մի քանի օրով լինում է Երևանում: Արդեն այդ այցելության ժամանակ և իբրև արդյունք այդ այցելության՝ գրողը հանգում է կարևորագույն եզրակացության: Մեծ աղետից փրկված և աշխարհով մեկ ցիրուցան եղած հայությունը փրկության ու ապագայի միայն մի ելք ունի, մի ճանապարհ՝ դեպի Արարատ, դեպի Նոյան լեռը, դեպի Հայրենիք: Այդ ճանփորդությունը ներկայացնող հրաշալի էսսեն նա այդպես էլ խորագրում է՝ «**Դեպի Արարատ**»⁴: Իր առաջին վեպի հերոսը՝ Անցորդը, հետևում է գրողի խորհրդին, նրա նախանշած ճանապարհով գալիս Հայաստան, սակայն ֆիզիկական ահի ու սարսափի, կյանքին սպառնացող վտանգի պարտադրանքով հեռանում է Հայաստանից՝ հոժարակամ մատնվելով տարագրության:

Հաջորդ՝ «Բանկոօպը և մամուլի ոսկորները» վեպի հերոսը՝ Վահան

1 Տե՛ս Կոստան Զարյան, Սպանիա, Եր., «Նաիրի», 1998, 280 էջ:

2 Տե՛ս Կոստան Զարյան, Միացյալ Նահանգներ, Եր., «Սարգիս Խաչենց», 2002, 499 էջ:

3 Տե՛ս "Il Nuovo Giornale", "Il Secolo", "Il Messagero".

4 «Դեպի Արարատ», «Ոստան (կիսամեայ պարբերագիր արուեստներու, գրականութեանց և գիտութեանց)», Կ. Պոլիս, 10 մարտ 1920, N 10 (16) և 1 մայիս 1920, N 11-13 (17-19):

Իրերյանը, նույն Անցորդն է, որ եկել է Հայաստան նույն ճանապարհով և դարձյալ հեռացել Եվրոպա: 1931 թվականի նոյեմբերից «Հայրենիք» ամսագրում շարունակաբար տպագրվող վեպը հեղինակը ընդհատում է 1933 թվականի դեկտեմբերին և այլևս չի շարունակում: Վեպը անավարտ է: Հարցեր են ծագում չի գրվել, թե՞ գրվել է՝ չի տպագրվել, և ինչո՞ւ է հեղինակը ընդհատել վեպը: Արդյո՞ք միայն «Հայրենիք» ամսագրի խմբագրի հետ ունեցած տարակարծությունների պատճառով...

Թվում է՝ պատճառը պետք է ավելի լուրջ և հիմնավոր լինի: Տարակարծությունների կամ ներքին անհամաձայնության հետևանքով ընդհատելը համոզիչ չէ, որովհետև ընդհատումից երեք տարի անց Ջարյանը «Հայրենիք»-ում տպագրում է «Կոմիտաս Վարդապետին» բանաստեղծությունը, սկսում է տպագրել «Սպանիա»-ն, բայց «Բանկօօպ»-ը չի շարունակում: Ուրեմն պատճառը պետք է ավելի լուրջ ու հիմնավոր լինի: Ըստ իս, վեպը ընդհատելու բուն պատճառը գլխավոր հերոսի՝ Վահան Իրերյանի կերպարի լուծումն է: «Անցորդ»-ի հերոսը գալիս է Հայաստան, բայց չի մնում - չի կարող մնալ և հեռանում է ֆիզիկական դատաստանից փրկվելու համար: Եվ այնուամենայնիվ, Անցորդի վերաբերմունքը երկրի հանդեպ չի փոխվում. «Երախտապարտ եմ, օ իմ երկիր, քո հասցրած ցաւի և վէրքերի համար...»⁵:

«Բանկօօպ»-ի հերոսը՝ Վահան Իրերյանը, նույնպես գալիս է Հայաստան և նույնպես չի մնում, հեռանում է նույն պատճառաբանությամբ: Նա այն անձնավորությունն է, որ ողջ կյանքում որոնել է Հայաստանը, մղվել է դեպի Հայաստան, բայց հիմա հարկադրաբար դառնում է տարագիր: Անցորդի հեռացումով վեպը ավարտվում է, մինչդեռ Վահան Իրերյանին գրողը պատկերում է՝ ցույց է տալիս Իտալիայում և ապա Ֆրանսիայում՝ Փարիզում... Վեպի տպագրված վերջին էջերում նա հայտնվում է Փարիզի արվարձաններից մեկի աղքատիկ մի պանդոկի կիսախավար, ավելի քան աղքատիկ մի սենյակում: Հաջորդ էջերում Վահան Իրերյանը Իսպանիայում է, Կոստա Բրավա կոչվող ձկնորսական ավանում: Գրողի պատմությունը այստեղ էլ ընդհատվում է: Ինչ պիտի լիներ հերոսի հետագա ճակատագիրը: Կոստան Ջարյանը ըստ երևույթին չէր կարող բավարար պատասխան տալ այս հարցին, այսինքն՝ իմաստավոր, պատճառաբանված, հեղինակի ըմբռնումներին գոհացում տվող: Հայրենիքից հեռու ապրող մարդու կյանքը գրողին չի հետաքրքրում: Հոգեկան ներքին վիճակների մեջ իր հերոսը և Հայաստանը մի են: Այս պարագային որևէ պատասխան, իրավիճակի որևէ այլ լուծում կեղծ պիտի լիներ: Եվ գրողը, ըստ ամենայնի, շատ խորատես է եղել՝ ընդհատելով վեպը: Անհայրենիք անձնավորությունը այլևս թերի է և անկատար: Անցորդն ու Վահան Իրերյանը կատարյալ անհատներ են, երբ հայրենիքի հետ են, երբ ներկա են հայրենիքում, և իրենց ներաշխարհը արտացոլում է երկրի ու հայրենիքի կյանքի ու իրականության ամեն մի նրբերանգը, ամեն մի ելևէջը և արձագանքում է դրան: Առանց հայրենիքի նրանց կյանքը կորցնում է իր հոգեկան բովանդակությունը, դառնում է անիմաստ գոյություն: Եվ այս պատճառով էլ հայրենիքից հեռացած հերոսի ճակատագիրը գրողին այլևս հետաքրքրական չէ:

«Բանկօօպը և մամուլի ոսկորները» վեպից հետո, ի թիվս այլ գործերի,

5 Կոստան Ջարյան, Անցորդը և իր ճամբան, Եր., 2010, էջ 506:

1936 թվականի մայիսի վերջին օրերին Կոստան Զարյանը գրում է «Կոմիտաս Վարդապետին» բանաստեղծությունը: Այն գրողի ստեղծագործական համակարգում սկզբունքային և հոգեբանական առանձնակի նշանակություն, իմաստ և բովանդակություն ունի: Մի խումբ հայեր Կոմիտասի աճյունը տանում են հայրենիք, Կոմիտաս Վարդապետի աճյունը վերադառնում է հայրենի հող: Մեծ երաժիշտը, որ իր անձով և դառը ճակատագրով այլևս մարմնավորում ու խորհրդանշում էր մեր ժողովրդի ապրած մեծագույն Աղետը, նոր վերադարձով ավելոծում է ողջ հայությանը, հայության սիրտը նորից արյունոտվում է, տարագիր հայերը սուր ցավով վերապրում են մեծ ողբերգությունը: Բանաստեղծության տողերի խորքում պարզ երևում է իր՝ գրողի դրաման: Կոմիտասի աճյունը վերադառնում է, մինչդեռ ինքը՝ բանաստեղծը, անկարող է վերադառնալ:

Հարկադրյալ տարագրության այս դրաման յուրօրինակ արտահայտություն է գտնում «Երկիրներ և Ասուածներ» շարքում: «Սպանիա»-ի էջերում գրողը լցված է Հայաստանով, իսպանական կյանքի և իրականության բազմաթիվ իրողությունները նրան առիթ են տալիս հիշելու Հայաստանը, հայրենի երկրի իրողությունները, համեմատելու, վերլուծելու, եզրակացություններ անելու, հիանալու և հրձվելու, հպարտանալու և ոգևորվելու իր հիշողության և ստեղծագործողի երևակայության մեջ նյութեղեն-առարկայական իրականությունից ավելի իրական իր Հայաստանով, իր հայրենիքով:

«Սպանիա»-ին հաջորդած «Միացեալ Նահանգներ»-ը հոգեկան այլ խորք և իմաստ ունի: Իսպանիան գրողին մերձեցնում-մոտեցնում էր Հայաստանին, մինչդեռ Միացյալ Նահանգները ոչինչ ընդհանուր չունեին Հայաստանի հետ և դրանով իսկ արդեն գրողին հեռացնում էր Հայաստանից: Իսպանիայի երկնքի տակ, իսպանական կյանքի և ոգու մեջ գրողը Հայաստանն է տեսնում, մինչդեռ Միացյալ Նահանգներում չի տեսնում ոչինչ, որ իրեն կապեր իր երկրի հետ: Հակառակը, Ամերիկյան իր սպառողական հոգեբանությամբ, հոգևոր պատմությունից զուրկ իրականությամբ ավելի է ընդգծում գրողի հոգևոր հայրենիքի կորստի զգացողությունը: «Միացեալ Նահանգներ»-ը գիրք է Հայաստանի իսպառ բացակայության, հայկականությունից, հայ մշակույթից, հոգևոր տարածությունից դուրս ապրելու, Հայաստանը իսպառ կորցնելու մասին:

Ընդհատելով «Երկիրներ և Ասուածներ» շարքը՝ գրողը վերադառնում է իր գրականության բուն թեմային՝ հայ մարդու, առհասարակ հայության՝ Հայաստանի հանդեպ ունեցած վերաբերմունքի, հայության և հայրենիքի հարաբերության խնդրին: «Անցորդը և իր ճամբան», «Բանկոօպը և մամուրի ոսկորները» վեպերի բուն ասելիքը հանգիստ չի տալիս գրողին: Նա ներքին զորավոր պահանջ է զգում երրորդ անգամ վերադառնալու այդ թեմային, մանավանդ հայությունը օրեցօր հայտնվում էր նոր, առավել ճգնաժամային վիճակների մեջ: Հայկական Սփյուռքը արդեն ձևավորվել էր և գոյություն ուներ իբրև հայրենագուրկ հայության նոր կենսակերպ: Բայց Կոստան Զարյանը շատ լավ էր հասկանում, որ Սփյուռքի գոյությունը ընդամենը ժամանակի, լավագույն դեպքում մի քանի սերնդի խնդիր է: Ինչ պետք է լինի աշխարհով մեկ սփռված հայության ճակատագիրը: Ձուլում, ուժացում և անհետացում: Ինչ պետք է անեն Անցորդն ու Վահան Իբերյանը օտար

երկրներում: Այս հարցի պատասխանը գրողը արդեն ձևակերպել էր «Սպանիա»-ի էջերում. «Արարատեան դաշտում տնկած մի կաղամախը անելի կարևոր է, քան Փարիզում բուսած տասը սորբոնացած երիտասարդները»⁶: Գրողը երկարորեն պատրաստվել էր հայությանը ուղղելու իր վերջին մեծ խոսքը: «Սպանիա»-ն և «Միացեալ Նահանգներ»-ը այդ մեծ խոսքի նախապատրաստությունն են, նախադուռը:

«Հայրենիք» ամսագրի խմբագրին՝ **Ռուբեն Դարբինյանին** ուղղված անտիպ նամակներից մեկում Զարյանը հստակ պարզաբանում է «Երկիրներ և Աստուածներ»-ի մտահղացման և իրագործման հանգամանքները. «...«Երկիրներ և Աստուածներ»ի երկրորդ՝ ամերիկեան մասը կարծում եմ մի քանի գլուխներից յետոյ կը վերջանայ: Ասեմ անմիջապէս, որ թէ՛ «Սպանիա»ն և թէ՛ «Ամերիկա»ն այդպէս ասած պատրաստութիւններ են, - մի հայեացք արդի աշխարհի վրայ, - երրորդ մասի համար, որ ամբողջովին պիտի նւիրած լինի, եթէ կարելի է այդպէս ասել, հայ ոգու բնագանցականին: Կտակի նման մի բան: Ո՞վ է իմանում ինչ կարող է - ինչ կարող չէ պատահել, ուզում եմ աշխարհայեացքս միանգամ ընդմիջտ պարզել: Ուզում եմ խօսել այն արժէքների մասին, որ կարող ենք և պէտք է հակադրենք աշխարհին, որի կառուցողականին չենք մասնակցել, որի համար պատասխանատու չենք, որի զոհն ենք: Եւ այդ՝ զուտ կրօնա-փիլիսոփայական տեսակէտից, որ մէջս մշակել է տարիների ընթացքին...»⁷: Ուրեմն, ինչպես այս նամակն է վկայում, գրողը, նախ, ուզում էր ի մի բերել, ամփոփել, ամբողջացնել ու հստակորեն ներկայացնել իր աշխարհայացքը, իր գեղարվեստական ու գեղագիտական-փիլիսոփայական համակարգը և հետո, իբրև կտակ, իբրև ավանդ պատգամել իր մտածումները, իր ազգային, գոյաբանական, բնագանցական, մշակութային ու կրոնափիլիսոփայական հայացքները հայության, հայ արվեստի ու մշակույթի, երկրի ու հայրենիքի՝ Հայաստանի շուրջ:

Ահա, վաղուց ի վեր իր մեջ մշակված ու հասունացած այդ մեծ խոսքը ասելու, այդ մեծ խնդիրը իրագործելու համար «Երկիրներ և Աստուածներ» շարքի բնույթը չի բավարարում գրողին: Զարյանը նախընտրում է գեղարվեստական արձակի ձևը և վերադառնում է վեպի ժանրին: «Եթե ուզում եք փիլիսոփա լինել, վեպ գրեք»⁸, - ասում էր **Ալբեր Կամյուն**:

Եվ Կոստան Զարյանը գրում է «Նաւը լերան վրայ» վեպը:

* * *

Գրողը վեպի սյուժե է դարձնում գրեթե անհավատալի մի պատմություն: Բաթում քաղաքում ծառայող մի ծովային հայ սպա Հայաստանի անկախացումից հետո որոշում է գալ Հայաստան և օգտակար լինել նորանկախ երկրին ու պետությանը: Հայաստանում դեպի Սևան ճամփորդելուց հետո վճռական որոշում է կայացնում. ինչ գնով էլ լինի, մի նավ ձեռք բերել և հասցնել Սևան՝ այստեղ նավագնացություն

6 Կոստան Զարյան, Սպանիա, Եր., «Նաիրի», 1998, էջ 37:

7 Ռուբեն Դարբինյանի այս նամակը գտնվում է Կոստան Զարյանի արխիվում (գրողի ժառանգների սեփականությունն է):

8 **Альбер Камю**, Сочинения, в пяти томах, т. 5. Харьков, «Фолио», 1998, с. 12.

կազմակերպելու համար: Սպան վերադառնում է Բաթում, «Ալբատրոս» անունով մի նավ է ձեռք բերում և տեղափոխում է Հայաստան: Երկրի համար ծանրագույն ժամանակներ են. սովի, կարիքի, մեծ զրկանքների, քաղաքացիական պատերազմի, քաղաքական ցնցումների, ահի ու սարսափի տարիներ են, և սպային հաջողվում է նավը բերել-հասցնել մինչև Քանաքեռի բարձունքը: Առաջին Հանրապետությունը պարտվում է, բոլշևիկները մտնում են Հայաստան: Եվ վեպը այստեղ ավարտվում է: Սյուժեի հիմքում ընկած է այս պատմությունը: Նկարագրված իրադարձությունները տեղի են ունենում 1918–1920 թթ., պատմականորեն ստույգ մի ժամանակում: Եվ, ինչպես գրողն է ընդգծում իր նախաբանի առաջին տողով, «այս վեպը, բուն իմաստով՝ պատմական վեպ չէ»⁹: Այո, պատմական որոշակի ժամանակ, պատմական իրադարձություններ են պատկերված վեպում, սակայն դրանք գոյություն ունեն իբրև միջավայր և հոգեկան վիճակ, իբրև մթնոլորտ և հասարակական տրամադրություն, իբրև խորապատկեր, այլ խոսքով՝ իբրև հոգեբանական տարածություն, որտեղ ծավալվում են նկարագրված իրադարձությունները:

Անիրական թվացող, գրեթե ֆանտաստիկական այս սյուժեն ունի իր իրական նախահիմքը, որ հիշում է Կոստան Զարյանը «Անցորդը և իր ճամբան» վեպում. «Իաշակցականները մեկնել էին և Երևանի կայարանում, վագոնի վրայ ցցած, թողել էին մի նաւ: ...Բաւականի մեծ, երկաթէ այդ նաւը ամիսներով մնացել էր թառած, շոգեմեքենաների մօտ, ափը ընկած տարօրինակ ծովային մի ձուկի նման: Մելամաղձոտ բան է ցամաքի վրայ նաւ տեսնելը: Խորտակւած երազի նման, ծխնելոյզը վեր տնկած, որբ այդ թռչունը, թևերը ծալել նստել էր բութ ու բորանի տակ, աչքերը տնկած անյայտ մի ճակատագրի առջև: Այդպէս ամիսներով...»¹⁰: Եվ Սև ծովից եկած հայ նավապետը որոշում է նավը հասցնել Սևան: Հասցնում է մեծ դժվարությունների ու տառապանքների գնով: Ի տարբերություն Կոստան Զարյանի վեպի հերոսի՝ իրական այս նավապետը եղել է շատ գործնական և հաշվենկատ անձնավորություն. «Այլևս հերոսացած՝ նա Սևանայ լճի տէր ու տիրականն է, ադմիրալը, ծովային սպէցը: Իրականի մէջ խելքը գլխին մարդ է, շատ գործնական, հաշիւը իմացող: Աշնան մօտակայ գիւղերից կարագ է առնում և քաղաքում ծախում: Իր ծրագիրները ամբողջովին տնտեսական են, դրական, օգտակար»¹¹: Սա, իհարկե, Զարյանի նավապետից տարբեր կերպար է:

Ինչո՞ւ է Կոստան Զարյանը նավը լեռներով ու դաշտերով Սևան հասցնելու այս խենթ, բայց չափազանց խորունկ և իմաստավոր պատմությունը կոչել «Նաւը լերան վրայ»: Վեպի խորագիրը մի քանի իմաստ ունի, որոնք ներքուստ կապվում են միմյանց հետ և արտահայտում սյուժեի խորքում դրված խորհրդանշական իմաստը:

«Նաւը լերան վրայ» արտահայտության առաջին իմաստը, իրական, առարկայական իմաստն է: Սև ծովի ափերից եկած նավապետը ձեռնարկում է չեղած, աներևակայելի, մարդկային ուժից վեր մի գործ. հեռավոր Սև

⁹ Կոստան Զարեան, Նաւը լերան վրայ, Պոսթըն, 1943, էջ 9:

¹⁰ Կոստան Զարեան, Անցորդը և իր ճամբան, Եր., «Սարգիս Խաչենց»-«Փրինթինֆո», 2010, էջ 425–434:

¹¹ Նույն տեղում, էջ 434:

ծովի ափից նախ գնացքով, հետո՝ գերաններից պատրաստված պարզ քարշակին լծված եգներով, և ոչ թե մետր առ մետր, այլ սանտիմետր առ սանտիմետր, նավը հասցնում է Հայաստան, հետո՝ Երևան, բարձրացնում է մինչև Քանաքեռի բարձունքը՝ Սևան տանելու համար: Վեպի ավարտին նավը մնում է Քանաքեռի բարձունքին մի ժայռի վրա ցցված՝ «նալը լերան վրայ»...

Հետո՝ «նալը լերան վրայ» արտահայտությունը ուղղակի ակնարկ է Նոյան տապանի պատմությանը: Կրոնական գրականության և քրիստոնեական քաղաքակրթության այս հնագույն խորհրդանշանները՝ նավը և լեռը, իրենց իմաստով, անշուշտ, կապվում են քսաներորդ դարասկզբի աշխարհակործան քաղաքական ցնցումների ու պատերազմների հետ:

«Նալը լերան վրայ» արտահայտությունը ունի հեղինակի համար թերևս ավելի կարևոր ու նշանակալից իմաստ՝ Հայաստանի կորսված պետության և պետականության վերականգնումը: Քաղաքական ցնցումների և մորիկների մեջ, Եղեռնից մազապուրծ մի բուռ ժողովուրդ իր վերջին հողակտորի վրա, ներքին և արտաքին ջլատումների, ուժասպառության, հուսահատության պայմաններում, բոլորովին անօգնական վիճակում գերմարդկային ճիգով ու նվիրումով ջանում է երկիր և պետություն ստեղծել: Վեպի հերոսը այդ մեծ նվիրումի անհատներից մեկն է. «Մեր երկիրը նա է. ուժ պէտք է, խելք և կամք պէտք է, մեր սեփական միջոցներով նրան տեղ հասցնել...»¹²:

Եվ, վերջապես, չորրորդ իմաստը այն է, որ վեպի գլխավոր հերոս Արա Հերյանը, ժամանակն է նրա անունը տալու, նրան այլևս անունով կոչելու, նավը Երևան հասցնելու ճանապարհին, հասցնելու հետ մեկտեղ գտնում է իր իսկական ինքնությունը, իր եսը, կյանքի իմաստը: Նավապետ Հերյանը կարողանում է հաղթել ինքն իրեն, փոխել իր նախկին կենսաձևը, հրաժարվել ավելի ապահով և հարմարավետ կյանքից, այս փոփոխության ճանապարհին կորցնելով թանկ ու հարազատ շատ բան, բայց փոխարենը հասնում է մարդկային ոգու ներքին անհաս բարձունքին: Նավի վերելքը Արա Հերյանի վերելքն է: Իրականությունը ձեռք է բերում առասպելական իմաստ, ավելի ցնցող, ավելի գորեղ, քան ինքը՝ առասպելը:

Այս ամենով հանդերձ, «Նալը լերան վրայ» վեպը գրական սկզբունքային հակադրություն է հեղինակի երբեմնի նախընտրելի ու շատ սիրելի նորվեգացի մեծ գրող և դրամատուրգ Հենրիկ Իբսենի (1828–1906) գրականությանը, մասնավորապես նրա հանրահայտ «Պեր Գյունտ» (1865) նշանավոր դրամային: Պեր Գյունտը վաղուց թողել է գրական դրամայի տարածությունն ու սահմանները և դարձել Նորվեգիայի ազգային նկարագրի խորհրդանշաններից մեկը, եթե ոչ ամենահայտնի կերպարը: Իբսենի դրամայում Պեր Գյունտը թողնում է հայրենի երկիրը և հետո, անցնելով ծովեր ու ցամաքներ, ափ է դուրս գալիս, վերադառնում է Նորվեգիա: «Պեր Գյունտ»-ը ավարտվում է սրանով:

Կոստան Զարյանը փաստորեն սկսում է այնտեղից, որտեղ վերջացնում է Իբսենը: «Հեռաւոր ճամբորդութիւնների նաւապետ» Արա Հերյանը վեպում իր կյանքը սկսում է ծովերն ու հեռավոր ճամփորդությունները թող-

12 Կոստան Զարեան, Նալը լերան վրայ, Պոսթըն, 1943, էջ 117:

ներուց հետո: «Լեռների ազատ և խենթ ոգի»¹³ Պեր Գյունտը ապրել է իր ամբողջ կյանքը և հիմա, արդեն ծերունի դարձած, վերադարձել է Նորվեգիա, բայց այդպես էլ չի գտել իր կյանքի իմաստը, ժամանակին չի կարողացել հասկանալ և գնահատել Սոլվայգի սերը, իր հետագա կյանքը չի ունեցել ներքին նպատակ ու բովանդակություն: Երիտասարդ Արա Հերյանը հասկացել, կռահել է,- ներքնատեսորեն, թե տրամաբանորեն,- թե ինչի է կոչված ինքը, ինչը պետք է կազմի իր կյանքի հիմնական իմաստն ու բովանդակությունը: Նա կոչված է իրագործելու անկարելին՝ նավը բարձրացնելու լեռը: Այստեղ է, և այսպես է, որ նավի և լեռան խորհրդանշանների գեղարվեստական ըմբռնումները հասնում են ամենամեծ ընդհանրացման՝ ստանալով մի քանի իմաստ և ներկայացնելով դրանց միասնական, հանրագումարային գեղարվեստական պատկերը:

Կոստան Զարյանը իր գրականության հիմնական հերոսին՝ նույն Անցորդին և նույն Վահան Իբերյանին, երրորդ անգամ բերում է Հայաստան: Արա Հերյանը, ի վերջո, այդ հերոսների նոր կերպափոխությունն է: Իր նախորդ վեպերի հերոսները Հայաստանում գտնվում են 1922-1924 թվականներին: «Նալը լերան վրայ» վեպի հերոսը Հայաստանում է 1918-1920 թվականներին: Ժամանակով Արա Հերյանը ավելի վաղ է, սակայն կերպարային բովանդակությամբ հաջորդում է Անցորդին և Վահան Իբերյանին: Անցորդի և Իբերյանի կերպարները նոր լուծում, նոր իմաստ, նոր բովանդակություն են ստանում: Այդ երկու հերոսների հեռանալը Հայաստանից, նրանց բարեշնորհ անհաշտությունը հայկական իրականության հետ գրողի համար այլևս բավարար դիրքորոշում չէ: Կոստան Զարյանը փաստորեն այս վեպով վերախմբագրում-վերասրբագրում է սկզբունքային շատ կարևոր հարց՝ հայ մարդու, հայ գրողի, իր հերոսի վերաբերմունքը Հայաստանի իրականության հանդեպ:

Հենց սա էլ դառնում է նրա մեծ խոսքը, մեծ ասելիքը, իր վեպի հիմնական խորքն ու բովանդակությունը: Վեպը գրված է մի շնչով, միանգամից: 1938-ի հունվարին ավարտվում է «Հայրենիք» ամսագրում «Միացեալ Նահանգներ»-ի տպագրությունը: Հեղինակի վկայությամբ՝ 1939-ին «Նալը լերան վրայ» վեպը արդեն ավարտված էր և թարգմանված իտալերեն:

Որևէ վեպի մեծագույն արժանիքը,- եթե դա փորձարարական նպատակներ հետապնդող վեպ չէ,- իր սյուժեն է և վեպում կերտված կերպարները: Առաջնայինը սա է, վիպասանը պետք է կերպար ստեղծի: Կոստան Զարյանի վեպը ունի այս երկու կարևորագույն հատկանիշն էլ:

«Նալը լերան վրայ» վեպի սյուժեն թեև միագիծ է, մեկ առանցք ունի՝ նավի ճամփորդությունը, այնուամենայնիվ գրողը կարողացել է այն դարձնել հետաքրքրական ու գրավիչ: Ընթերցողը, որ աննկատելիորեն դառնում է Հերյանի աջակիցը, մեծ հուզումով է հետևում վիպական սյուժեի ընթացքին՝ տեղ կհասնի նավը, թե ոչ, մենք, այլևս մենք, կկարողանանք տեղ հասցնել նավը: Եվ նավի հետ կապված ամեն մի մանրամասն, ամեն մի մանրադետալ ու միջադեպ ծառայում են ոչ միայն սյուժեի զարգացմանը, այլև ենթարկված են ավելի մեծ ու խոր նպատակի՝ գրողի հիմնական ասելիքի իմաստավոր-

13 Կոստան Զարյան, Երկեր, Անթիլիաս, 1975, էջ 601:

մանն ու ամբողջացմանը:

Ինչպես ասում են՝ վեպը բնակեցված է մեծաթիվ գործող անձերով, ունի գլխավոր հերոս, գլխավոր գործող անձ. դա «հեռաւոր ճամբորդութիւնների նաւապետ» Արա Հերյանն է: Մյուս գործող անձինք հանդես են գալիս Հերյանի հետ ունեցած կապերի ու հարաբերությունների ձևով: Այս վեպի հերոսները պատկերված են ոչ թե համաժամանակյա-զուգահեռ գործողությունների մեջ, այլ հաջորդական, Արա Հերյանի տեղաշարժերի և գործողությունների առնչությամբ: Կոստան Զարյանը իր վեպում պատկերել է 1918-1920 թվականների Հայաստանի կյանքի գրեթե բոլոր կողմերը, հասարակական-քաղաքական տարբեր կողմնորոշումներ ունեցող, հանրային կյանքի տարբեր խավեր ներկայացնող, ժամանակի ամենատարբեր տրամադրությունները կրող մարդկանց: Եվ պետք է ասել, որ ստեղծել է մնայուն, համոզիչ ու հավաստի կերպարներ: Թեպետև որոշ գործող անձինք վեպում երևում են առանձին միջադեպերում միայն, բայց իրենց գրական պատկերումով, անկասկած, վեպի կարևոր հաջողությունն են, ինչպես, օրինակ, Բաթումում Հերյանի մտերմուհի Դաշենկան, Հերյանին Սևան տանող սայլապան Շնավոնը կամ Թիֆլիսի դուխանում խրախճանք անող հայ դերասանները կամ թե վաղամեռիկ պորուչիկ Կուդինյանը:

Վեպի մեծագույն արժանիքը գլխավոր հերոսի՝ Արա Հերյանի կերպարն է: Քիչ է ասել, թե ուշագրավ են, գրական առումով ուղղակի հեղինակի մեծ հաջողությունն են խորհրդավոր հնդկահայ Պետրոս Մարկի, հանրապետության պաշտոնյա Պերոնյանի, Բեսարաբիայից եկած ծովային սպա Միքայել Թումանյանի, հազարապետ Բարգեն Միրանյանի, Հերյանի տանտիրոջ աղջկա՝ Զվարթի, ապազգային-քաղքենի մարդկանց՝ Տանձիբարովի ու Ստեփան Մարկոսովիչի և մի քանի այլ գործող անձանց կերպարները:

Կոստան Զարյանի վեպը սկսվում է խաղաղ ու հանդարտ ձայնով, մոտոդիկ երաժշտության պես: Խաղաղ է և վեպի ընթացքը. առաջին մասում գլխավոր հերոսը ավելի հայեցողական վերաբերմունք ունի շրջապատի ու միջավայրի, դեպքերի ու իրադարձությունների հանդեպ: Վեպի գործողությունների զարգացմանը զուգընթաց այլ ձայներ են գալիս միանալու պյուժեի բուն ընթացքին, ակամա կամ պարտադրաբար մարդիկ են միանում պատկերված իրադարձություններին, հասարակական-քաղաքական ցնցումներն ու տուրևառություններն են դառնում ավելի վճռական, պատմական դեպքերն ու իրողությունները վեպի ընթացքին տալիս են բազմաձայնություն, աղմուկ, արագացում: Դեպքերի և իրադարձությունների հորձանուտը իր մեջ է առնում ամեն բան՝ նավը, նավապետ Հերյանին, իր ճանաչած բոլոր մարդկանց, քաղաքը, երկիրը, Հայաստանը... Այս խելահեղ տարերքը կարող է կործանել և կործանում է շատ բան, տակնուվրա է անում, խորտակում է կյանքի ամուր և անխորտակելի թվացող հիմքերը: Եվ Կոստան Զարյանի վեպի գլխավոր հերոսը՝ Արա Հերյանը, պատվով է դուրս գալիս մեծ փորձությունից: Անկումների սարսափից շփոթահար ու տուկահար մարդկանց մեջ Արա Հերյանը պահում է պատվի ու պարտքի բարձր գիտակցությունը, իր բարձր առաքելության նպատակի գիտակցությունը՝ նավը պետք է անցնի լեռներով և հասնի Սևան: Երկիրը պետք է լինի, պետք է կայանա:

Ուստի և Արա Հերյանի հետ անցնենք վեպի էջերով մինչև իր մեծ ըն-

թացքի վերջին պահը, մինչև վեպի վերջին տողը:

* * *

Վեպի գլխավոր հերոսը հայ մարդու համար անսովոր, բայց ոչ անհավանական զբաղմունքի կամ մասնագիտության տեր մարդ է, «հեռաւոր ճամբորդութիւնների նաւապետ» Արա Հերյանը: Զարյանի գրքում, ինչպես իր նախորդ վեպերում, ոչինչ պատահական չէ: «Հեռաւոր ճամբորդութիւնների նաւապետ» արտահայտությունը Արա Հերյանին դարձնում է մի տեսակ աշխարհաքաղաքացի, մի անձնավորություն, որի համար ֆիզիկական սահմաններ, երկրների և պետությունների եզրագծեր չկան, իր տարածությունը Համաշխարհային օվկիանոսն է, որի վրա սահմաններ չեն արձանագրված: Արա Հերյանը, ուրեմն, ապրել և գործել է մեծ, բաց, արձակ տարածության մեջ: Դա իր էության, նկարագրի, իր անձնավորության բնութագրության համար չափազանց կարևոր պահ է:

Զարյանը իր հերոսին անվանել է **Արա Հերյան**: Եվ ոչ պատահականորեն: Արան հայ հնագույն և ամենակատարյալ աստվածն է: Իր անվան նախահիմքը կա հայկական սրբազան աշխարհագրության մեջ ընդգծված ձևով: Արև, արեգակ, արփի, Արարատ, Արագած... Հայերի մեռնող-հառնող և անմահ աստվածը: Հերյան ազգանունը Արա անվան կրկնությունն է: Հեր-ը Պլատոնի **էր հայն** է, որ իջել է դժոխք և վերադարձել է: Ուրեմն, Արա Հերյան փաստորեն նույնն է, թե Արա Արայան: Կոստան Զարյանը հերոսի անուն-ազգանունով արդեն ընդգծում է նրա հայկական էությունը, նրա կերպարի ու նկարագրի խորապես ազգային, հայկական բովանդակությունը: Արա Հերյանը, ինչպես դա երևում է վեպի հետագա ողջ ընթացքում, իր մեջ մարմնավորում է մեռնող, մահվան եզրին հասած ժողովրդի դիմագրավելու, հառնելու և հաղթելու կարողությունները: Կոստան Զարյանը իր գրականության մեջ առանձնակի տեղ է հատկացրել Արայի կերպարին և քանիցս վերադարձել է դրան թե՛ իր արձակում և թե՛ պոեզիայում:

«Քաղաքներ» երկում («Կեսարը և մի բաժակ գինի») Զարյանը ոգեշունչ վերաբերմունքով է խոսում Պլատոնի «էր» կամ «Հեր» հայի մասին. «Հեռը, նա՛, որ տեսել էր, նա՛, որ վերադարձել էր»¹⁴: Կոստան Զարյանի ըմբռնումով Արան դառնում է մեր ոգեկան պատմության մեծագույն խորհրդանիշը.

«Ու Հեռը՝ այրը, ասում են, Արան է:

Հայոց թագաւորը, հայ սրտի արքան, հայ լեգենդայի լուսաւոր և գեղեցիկ ոգին: Նա՛, որ այստեղ, երեք աւազանների մօտ՝ Ուրմիայի, Սևանայ և Վանայ լճերի մօտ, դեռ շարունակում էր տեսնել ահաւոր մահերի դժոխքը, ժայռերի մէջ պեղւած անդնդային ստորերկրեաները, լեռների ծոցին թաքնւած սոսկալի ողբերգութիւնները, նա՛, որ պիտի վերադառնայ:

Հռոմից դուրս, Հռոմից վեր:

Հայ ոգին՝ Արան պիտի վերադառնայ:

Ես լսում էի, քաօսի երեսից քերովբէները շեփորում էին ոսկեձայն կանչեր, և լոյսերի մէջ առաջանում էր, վսեմ և գեղեցիկ, նախապղատոնը և

14 Կոստան Զարեան, «Երկեր», Աթիլիա, 1975, էջ 642:

նախաքրիստոսը՝ արքան յոյսերի, մեծ տեսանողը, Արան»¹⁵:

Արա Հերյանի անձը, կենսագրության մանրամասները պարզվում են աստիճանաբար և աննկատելիորեն. «Նաուպետ Հերեանը, թէպէտ երեսուները վաղուց անց, դեռ երիտասարդ մարդ էր»¹⁶: Պետք է ենթադրել, որ Արա Հերյանը իր կյանքի կեսին, «երեսուները վաղուց անց»՝ երեսուհինգ տարեկան անձնավորություն է (գրական արձագանք Դանտեի պոեմին), որ դուրս է գալիս կյանքի սովորական ճանապարհից և մոլորվում է անտառում. «Միջահասակ, բարեկազմ, ճկուն, բացօդեայ ճամբորդություններին և ծովային աղերին վարժ, արևից եփուած և հովերից ծեծուած երեսով»¹⁷:

Կոստան Զարյանը ակնհայտորեն իր կենսագրության մի քանի գծերը տվել է հերոսին: Արա Հերյանը, որ ծնվել է Լոռվա գյուղերից մեկում, վաղ որբացել է («Հօր մահից յետոյ, այլևս բոլորովին որբ, եկել էր Բաթում, մի ինչ-որ հեռաւոր ազգականի մօտ»¹⁸): Ինքը՝ Կոստան Զարյանը, տասը տարեկան հասակում հեռացել է հայրական տնից. ավագ եղբայրներից մեկը՝ Լևոն Եղիազարյանը, նրան տարել է Ֆրանսիա: Արա Հերյանը առաջին անգամ է մտնում նոր Հանրապետության մայրաքաղաք. Կոստան Զարյանը, եթե 1919 թվականի հոկտեմբերի երեք-չորս օրը չհաշվենք, 1922-ի հոկտեմբերին նույնպես առաջին անգամ էր մտնում Երևան: Իր «Մուտք» և մի քանի այլ բանաստեղծությունները հաստատում են դա: Զարյանը առանձնակի սեր է ունեցել ճամփորդությունների, նոր վայրեր տեսնելու և ճանաչելու, նոր իրականության մեջ հայտնվելու հանդեպ: Անշուշտ, իր նկարագրի այս գիծը կապվում է այն հանգամանքին, որ գրողը մանուկ հասակից զրկված է եղել կայուն, նստակյաց կյանքից, հայրական ընտանիքից, մայրական խնամքից, մերձավորների և հարազատների միջավայրից ու ներկայությունից, ծննդավայրի ջերմ տարածությունից և սեփական հայրենիքի ապահով զգացողությունից: Գրողը չի թաքցրել իր մղումը տեղափոխությունների, ճամփորդությունների, երբեմն նույնիսկ աննպատակ դեգերումների ու թափառումների հանդեպ. «Եթէ ծնած լինէի ուրիշ պայմաններում նաւորդ կը լինէի»¹⁹:

Եվ ահա հավիտենական ճամփորդի իր նկարագրի հատկությունները գրողը տվել է վեպի գլխավոր հերոսին՝ Արա Հերյանին, որպէսզի նա կամավոր հրաժարվի անհորիզոն ու անպարագիծ ծովերից, իր «Հիւսիսային աստղ» նավից, որով նավարկել է տարիներ, լեռնաշխարհ՝ իր հայրենիքը վերադառնալու համար:

Նավապետ Հերյանը իր ճակատագիրը որոշող անհատներից է. «Իսկական մարդը պէտք է հնարի իր ուժերին համապատասխան դէպքեր: Ներքին իմաստով լուսաւորի իր օրերը»: Մանկությունից ի վեր Հայաստան չտեսած մարդը մի օր որոշում է մեկնել Հայաստան: Մանկության հիշատակները՝ «ծննդավայրը, լեռները, դաշտերը... <...> Ու գիւղը՝ լեռան լանջին կպած, ու տնակը՝ գէջով ծածկուած, և գետակը, որ վշշալով նրա մօտից

15 Նույն տեղում, էջ 643:

16 Կոստան Զարեան, Նաւը լեռան վրայ, Պոսթըն, 1943, էջ 12:

17 Նույն տեղում, էջ 12:

18 Նույն տեղում, էջ 17:

19 Կոստան Զարեան, Անցորդը և իր ճամբան, Եր., 2010, էջ 94:

վագում էր»²⁰, դառնում են իր էության անբաժանելի մասը: Մանկության հուշերը նրան պաշտպանում են կյանքի դժվարագույն պահերին և ուժ են տալիս՝ դիմագրավելու ամեն տեսակ փորձությունների: Հերյանը այս ամենը զգացել է սրտով, զգացել է ողջ էությամբ, մինչև որ մի օր տարագիր մի հայ պարզ խոսքերի է վերածել այդ զգացումը. «Հայի սրտում երկիրը, հայրենիքը, – ասել էր նրան արտասահմանում հանդիպած մի գաղթական, – միայն անուշ յիշատակ չէ՝ այլ արհիւնի հետ շրջող մի ոգեկանություն, առանց որի՝ աշխատանք, հարստություն, դիրք և փառք դառնում են անիմաստ: Ամեն անգամ, որ էս հեռուներում մի քիչ կեանք եմ վայելում, – ասելացրել էր նա, – մի յաջողություն եմ ձեռք բերում, ինչպես ասեմ, ինձ էնպես է թւում, որ մի բանով զրկում եմ, վիրաւորում մէջս ապրող էդ երկրի ոգին»²¹:

Նավապետ Հերյանը իրեն զգում է թերի, անկատար. «Պէտք է գտնել իր անհատականութեան միութիւնը և դիմաւորել եկող դէպքերին սրտի և մտքի լարած ուժերով»²²: Նա համոզված է, որ ինքը իր «անհատականութեան միութիւնը» կարող է գտնել միայն ու միայն նախնիների երկրում: Ահա թե ինչու որոշում է մեկնել Հայաստան: Այստեղ՝ Բաթումում, թողնում է սիրելի գործը՝ նավագնացությունը, սիրելի կնոջը՝ Դաշային, և «փոքրիկ մի պայուսակ ձեռքին, նաւորդի հինգած գլխարկը մինչև յօնքերը քաշած» «այն առաւօտ իսկ» ձանկա է ընկնում իր ձակատագրին ընդառաջ՝ մեկնում է Հայաստան²³:

Սկսվում է հերոսի ողիսականը՝ ձանապարհի դեպի «ձենձերեալ Իթակէ», դեպի Հայաստան, բայց և ընթացք դեպի իր ինքնության ձանաչումը, դեպի իր էության հստակումն ու հաստատումը, դեպի ներքին կատարելություն, երբ անհատի գիտակցությունը ուղղված է իր կյանքի ներքին իմաստի ու նպատակի բացահայտմանը, երբ այդ կյանքը ունի անհատի անձնական կյանքի ու հետաքրքրությունների սահմանից տարբեր, մարդկային անհատի գոյությունը իմաստավորող ավելի բարձր՝ ոգեկան նպատակ ու բովանդակություն:

Հերյանը վեպի էջերում անցնում է մեծ ձանապարհ: Այդ ձանապարհը սկսվում է Հայաստանի հետ առաջին հանդիպումով: Այլ են մանկության գերող պատկերները, այլ՝ իրական Հայաստանը և իր կյանքը: Առաջին հանդիպումը ցնցում է Հերյանին. նրա էությունը տակնուվրա է անում հայ գրականության քանիցս արձանագրած հին հակադրությունը՝ անպատմելի, հեքիաթային, ուղղակի ֆանտաստիկական գեղեցկության երկիր ու բնություն և այդ հեքիաթային բնության մեջ նույնքան անպատմելի աղքատություն, խեղճություն ու թշվառություն... Գնացքից դիտված երկիրը նրան հանգեցնում է մի կարևոր ստորի. «Երկիրը կանգնած էր մի և անբաժանելի: Ընդմիջտ միացած իր տարերքների հետ, հսկայական մի լուսությունով հագւած, վսեմ և մերկ:

Կասկած չկար, այդ հողերը սպասում են: Սպասում են մարդին:

Այդ հողերը ծարաւ են մարդով: Դարերից ի վեր, անյիշատակ ժամանակ-

20 Կոստան Զարեան, Նաւը լերան վրայ, Պոսթրն, 1943, էջ 17:

21 Նույն տեղում, էջ 17:

22 Նույն տեղում, էջ 18:

23 Տեն նույն տեղում, էջ 19:

ներից ի վեր նրանք սպասում են ուժեղ, յանառ, ճակատը տեսիլքով լուսա-
տուրած, բազուկները զօրեղ մարդին:

Երկրի նման, լռութիւնով հագւած, վսեմ և մերկ մարդին:

Մարդին: Մարդկանց, մարդկանց...»²⁴:

Հայաստանը և մանավանդ 1918 թվականի Հայաստանը կարիք ուներ
նման մարդկանց: Գրողը գտնում է այդպիսի մեկին՝ Արա Հերյանին, և բե-
րում է Հայաստան: Բայց մինչև կատարելապէս «ուժեղ, յանառ, ճակատը
տեսիլքով լուսատուրած դառնալը» Արա Հերյանը պետք է անցնի – անցնում
է ինքնամոտեցման և ինքնաճանաչման երկար ու դժվարին ճանապարհ:
Նույն ձևով նա պետք է ճանաչի երկիրը և մարդկանց:

Չմոռանանք, որ Արա Հերյանը կիրթ և զարգացած անձնավորություն է,
գիտի իր երկրի անցյալը, պատմությունը, մշակույթը... Ամենայն արդարու-
թյամբ նրա մասին կարելի է ասել այն, ինչ Զարյանը ասում է Հերյանի
նախորդ կերպավորման՝ Վահան Իբերյանի մասին. «...անօթի և մոլեռանդ
աչքերով պրպտեց հայ պատմութիւնը, սրած ականջով մտիկ արաւ իր ցե-
ղի սրտից բխող երգերին, սկսեց ուսումնասիրել լեզուն և գրականութիւնը
և եթէ կորցրեց իր մտային թռիչքի ազատութիւնը, վաստակեց այն, ինչ որ
անփոխարինելի է՝ իր անձը հիմնաւորող ոգին»²⁵:

Եվ ահա գնացքի պատուհանից երևում են Անիի ավերակները.

«Անին, Անին, – պոռում էին ներսից:

Այդ նւիրական անունը Հէրեանի գլխի մէջ մի վայրկեան երգեց: Պատ-
մութեան մագաղաթեայ էջը սարսռալով բացեց և խօսեց նրա սրտին: Անին՝
հայոց փառքերի հէքեթայի վայրը, հարիւրաւոր եկեղեցիների, փարթամ
պալատների և անառելի ամրոցների երազային մայրաքաղաքը»²⁶:

Այսպիսի ապրումներ ունենալու համար հայրենասիրական խորունկ
զգացումը բավական չէ, անհրաժեշտ է ոչ միայն պատմական իրողություն-
ների խոր իմացություն, այլև ոգեկան զորավոր կապ անցյալի հոգևոր ու
պատմական ժառանգության հետ: Այսպէս, աստիճանաբար, բացվում ու
բացահայտվում են Արա Հերյանի կերպարի ու նկարագրի տարբեր կող-
մերը, նրա ինքնատիպ ու հարուստ անհատականության յուրօրինակ գծերը:
Հայաստան հասնելու ճանապարհին, գնացքում և ապա Գյումրիում կա-
տարված մանրադէպերն ու միջադէպերը, իր շուրջը լսվող զանազան խո-
սակցությունները, իհարկե, Հերյանի ներքին տարակույսների արտացո-
լումն են և նրան նախապատրաստում են Առաջին հանրապետության մայ-
րաքաղաքին հանդիպելու: Հերյանը Երևան է մտնում մեծ հուզումով: Արա-
րատյան դաշտը և հայոց լեռները... «Այդ դաշտից ու այդ լեռներից գալիս էր
հանգիստ և կորովալի մի պայծառութիւն»²⁷: Եվ այդ զգացական պայծա-
ռության մեջ՝ Հայաստանի իրական կյանքը: Այն, ինչ տեսնում է Հերյանը
Երևանում, Առաջին հանրապետության դժվարագույն տարվա գեղարվես-
տական ցնցող պատկերումն է:

«Հայաստանը դաժանօրէն մենակ էր:

24 Կոստան Զարեան, Նաւը լերան վրայ, Պոսթըն, 1943, էջ 31:

25 Կոստան Զարեան, Բանկօօպը և մամուլի ոսկորները, Անթիլիաս, 1987, էջ 169:

26 Կոստան Զարեան, Նաւը լերան վրայ, Պոսթըն, 1943, էջ 34:

27 Նույն տեղում, էջ 39:

Լեցած մի քանի հարիւր հազար տաճկահայ փախստականներով և անհամար որբերով, տարիներով մղած պատերազմից յետոյ և միլիոնաւոր գոհերից յետոյ, չնայած յաղթութիւններին, նա դեռ ստիպւած էր իր գոյութիւնը պաշտպանել:

Ջէնք չկար: Հաց չկար»²⁸:

Եվ այնուամենայնիվ, Հերյանը ողջ էությամբ ընդունում է այդ կյանքը և այդ իրականությունը: Իր շուրջը կատարվող ամեն բան, ամեն մի մանրուք ու մանրադէպ առանձնակի, խորհրդավոր, իմաստալից նշանակություն է ստանում նրա գիտակցության մեջ՝ մարդուն կապելով երկրին, իրականությանը, ժամանակին:

Հերյանը Հայաստանում գործունեության ասպարեզ է փնտրում. «...ես եկել եմ անմիջապէս գործի լծելու համար... մի բանով օգնելու համար երկրին...»: Բայց ինչ կարող է անել ծովային սպան՝ «հեռաւոր ճամբորդութիւնների նաւապետը», լեռների վրա, լեռնաշխարհում: Դիպվածը նրան հանում է ճիշտ ճանապարհ, բերում իր որոնած ճշմարտությանը: Կենտրոնական փողոցի սրճարանում հարևան սեղանի մոտ նստած «ինժինների գլխարկով, թուխ, լայնուս մի պարոն» խոսակցություն է սկսում Հերյանի հետ՝ ցրելով նրա տարակույսները. «Հիմա յիշեցի... երիտասարդ ծովային սպայ մը կայ, որ Սևանայ լճի ափին բան մը կը շինէ... նաւ մը ըլլալու է...

«...» Հերեանը տաղաւարից հեռացաւ ուրախացած: Պէտք էր գնալ անմիջապէս և տեսնել լիճը: Պէտք էր ծրագիր մշակել և փորձել նրան իրագործել: Իսկապէս, Սևանը... Ինչպէ՛ս էր եղել, որ այդ մասին չէր մտածել»²⁹:

Բայց ավելի կարևոր է դառնում մեկ այլ դիպված, մեկ այլ հանդիպում: Համեստ մի ճաշարանում, որտեղ սովորաբար ընթրում է Հերյանը, սեղանի շուրջ հանդիպում է անսովոր և քիչ է ասել՝ անսովոր, ուղղակի խորհրդավոր մի անձնավորության, Պետրոս Մարկ անունով: Պարզվում է, որ նա նույնպէս եկվոր է, հնդկահայ... Արմատներով Արարատյան դաշտի մարդ է. 1604-ին Շահ-Աբբասը, հետո՝ Պարսկաստան՝ Նոր Զուղա, ապա՝ Հնդկաստան՝ Կալկաթա... Մանկությունից ի վեր ապրել է Կալկաթայում, մաշկով՝ դեմքով, ձեռքերով, թուխ մարդ է, հնդիկի նման: Եվ հիմա որոշել է Հայաստան գալ նույն ճանապարհով՝ Պարսկաստան և Պարսկաստանից Հայաստան... Այս տարօրինակ մարդը Արա Հերյանի հետ խոսում է ծովի մասին, պնդում է, որ «ամեն բան գալիս է ծովից և ամեն բան գնում է ծով», խոսում է այն ծովի մասին, որ միացել է «երկնքին և երկրին, բոց էր դարձել և այդ բոցից ծնւել էր խարտեաշ այն պատանին»³⁰:

Պետրոս Մարկը Արա Հերյանին կհանդիպի ևս երկու անգամ, ավելի ճիշտ՝ կհայտնվի նրան, կխոսի նրա հետ, և այդ հայտնություններն ու խոսքերը Արա Հերյանի համար կլինեն կարևոր, վճռորոշ ու ճակատագրական: Պետրոս Մարկը փաստորեն Արա Հերյանի երկվորյակն է, նրա ներքին ձայնը, նրա էության թաքուն, իրեն իսկ անհասանելի և անհայտ գոյությունը, որ ճակատագրական խոսքեր պիտի ասի և ճակատագրական դեր

28 Նույն տեղում, էջ 42:
29 Նույն տեղում, էջ 47:
30 Նույն տեղում, էջ 53:

խաղա իր կյանքում:

Այս հանդիպումից հետո Հերյանը որոշում է անմիջապես մեկնել Սևան: 1922-ի աշնանը Հայաստան հասնելուց հետո դեպի Սևան ճամփորդելը Կոստան Զարյանի համար եղել է ուղղակի իրադարձություն: Հարցը սուկ ֆիզիկական ճամփորդությունը չէ: Նա իր ողջ էությանը զգում է, ներքնատեսորեն գիտի, որ Հայաստանի գոյության մեջ, նրա ընդերքի թաքնաթաքուր խորքերում գաղտնիք, առեղծված, խորհուրդ կա: Գրողը երկրի իրողությունների, ամեն մի իրի ու առարկայի մեջ որոնել է այդ թաքնաթաքուր իմաստը, խորհուրդը, բովանդակությունը, ջանացել է հասու լինել երկրի գաղտնիքին, ըմբռնել երկրի ներքին ձայները, հասկանալ երկրի խորհրդանշանային լեզուն: Թերևս միայն այդ ճանապարհով կարելի էր լսել երկրի ոգու ձայնը, հասնել այդ ոգու բարձր դրսևորումներին, միանալ նրանց: Դեպի Սևան կատարած առաջին ճամփորդությունը առանձնահատուկ տեղ և նշանակություն ունի «Անցորդը և իր ճամբան» վեպում³¹: Այդ ճամփորդությանը Զարյանը մի պոեմ է նվիրել (անտիպ), այդ ճամփորդությունը յուրովի իմաստավորել է նաև «Բանկոօպը և մամուլի ոսկորները» վեպում³²: Դեպի Սևան ընթացքը վերելք է, վերելք դեպի հայկական ոգու ամենաբարձր դրսևորումներից մեկը: Բայց Սևանի ափ հասնելը դեռ Սևան հասնել չէ: Պետք է հասնես կղզի, ելնես բլուրը, բարձրանաս մի ժայռի վրա, որպեսզի իսկապես տեսնես Սևանը: Հերյանը Սևան է հասնում աշնանային տոնախմբության մի օր: Լիճը վերևից դիտելուց հետո որոշում է մտնել եկեղեցի: Եկեղեցում լցված բազմությունը, սոմերը, պատարագի արարողությունը խիստ հուզում են նրան, և նա աղոթում է. «Տէր Աստուած,– փսփսացին իր շրթունքները,– Տէր Աստուած, ինձ ուժ տուր իրագործելու համար այսօրայ յղացած գաղափարս... Ոչ անձնական շահի համար, այլ ոչ փառասիրության համար, այս ժողովրդի համար, որ ահա առջևդ չոքած, սպասում է քո լոյսին... Դու, որ ապրում ես այս կղզում, Դու, որ ստեղծել ես այս լիճը, տո՛ւր ինձ ուժ և եռանդ և յարատևութիւն բերելու համար երազած նաւը... նաւը հաւատքի և լոյսի...»³³:

Աղոթող Հերյանը նկատում է, որ շրջապատված է գառնուկներով: Ամմեղ գառնուկներով: Քիչ հետո նա շրջապատվում է տոնախմբության եկած մարդկանցով, ժողովրդով, որ նույնպես անմեղ զոհ է պատմական մեծ ցնցումների:

Հեղինակը հերոսին տանում է ճանաչման և ինքնամոտեցման մեծ ճանապարհով: Կոստան Զարյանի և, իհարկե, նաև նավապետ Հերյանի համար «Հայաստանը գաղափար է, հոգեկան իրականություն, խորհրդապաշտական անհրաժեշտություն: Նա աւելի խոր է, քան առարկայական պայմանները, աւելի տևական, քան պատմական անցքերը և քաղաքական իրադարձությունները»³⁴: Եվ Սևանում Արա Հերյանը մի քանի հայտնաբերումներ է անում, որոնք լրացում և ամբողջացում են տալիս իր հայեցի նկարագրին ու կերպարին: Նախ նա հայտնագործում է հայ երգը, հայ հոգևոր երաժշտության

31 Տե՛ս Կոստան Զարեան, Անցորդը և իր ճամբան, Եր., 2010, էջ 409–481:

32 Տե՛ս Կոստան Զարեան, Բանկոօպը և մամուլի ոսկորները, Աթիլիսա, 1987, էջ 270–289:

33 Կոստան Զարեան, Նաև լեռան վրայ, Պոսթըն, 1943, էջ 70:

34 Կոստան Զարեան, Անցորդը և իր ճամբան, Եր., 2010, էջ 417:

խորապես մարդկային էությունը կլանում է նրան: «Քանի՛ տարիներ էր պատարագի ներկայ չէր գտնւած: Խոր մի յուզում սեղմեց նրա կոկորդը: Այդ յուզումի առաջը առնելու համար նա իր գլուխը թափահարեց և բռնի հազաց: Իրեն վրայ յանկարծակի կերպով խուժող այդ զգացումը զարմանք պատճառեց իրեն: Չգիտէր որ իր ներքը, մրափած յիշատակի նման, յուզական այդպիսի մի աշխարհ էր թաքնւած:

Մոմերը մոմակալների վրայ տնկեց, վառեց: Խաչ հանեց և, առանց իրեն հաշիւ տալու, թէ ինչ է անում, չոքեց: Այդ վայրկեանին չոքեց նաև խումբը և, մեղմ ու խորհրդաւոր, հնչեց Սուրբ-Սուրբը:

Երզը անտեսանելի սանդուխներով բարձրացաւ վեր և, ինչ որ փակւած դռներին բաղխելով, սրտի խորքից կոչեց և գանգատ արաւ: Յետոյ շէշտը մեղմացրեց, խորացաւ և խուլ հառաչանքով սփռեց խոնարհած բազմութեան տրտնջացող սրտերի շուրջը: Յուզիչ և հանդիսաւոր այդ տեսարանը Հէրեանի սիրտը սեղմեց և լոյսի նման տարածեց ամբողջ իր էութեան մէջ»³⁵:

Այնուհետև Հերյանը հայտնվում է ժողովրդական տոնախմբության բուն տարերքի մեջ, երբ ուխտագնացության եկած բոլոր մարդիկ, մեծ մասամբ՝ իրար անծանոթ, մեծ թե փոքր, կին թե երեխա, պատանի թե հասուն այր, համակված են ուխտավորի նույն երկյուղածությամբ և ներքին կրոնական-սրբազան հրձվանքով, ապրում-շարժվում են նույն մղումներով ու նույն զգացումներով և մի հետաքրքրական միասնություն են կազմում: Տոնախմբությունը ալիք է տալիս, ծփում է Հերյանի շուրջը, իր մեջ առնելով նրան, դարձնելով նրան պարզ ուխտավորներից մեկը, յուրային և հարազատ: Վանքի շուրջը ծավալվող-թավալվող այս համաժողովրդական ուրախության ու ցնծության տարերքի մեջ էլ Հերյանը հայտնաբերում է ժողովրդի կենսախառնվածքն ու կենսափիլիսոփայությունը. ժողովրդական համընդհանուր ցնծության ու տոնական խառնակության մեջ էլ նա հանդիպում է Զվարթին՝ իր վարձած տան տիրոջ աղջկան և, ի դեմս Զվարթի, հայտնաբերում է հայ կնոջ գեղեցկությունը:

Ահա այստեղ էլ, Սևանի եկեղեցում, իջնող մուրթի մեջ փոքրիկ սեղանի մոմերից լուսավորված պատի որմնանկարի դիմաց կանգնած Հերյանը անսպասելիորեն հանդիպում է Պետրոս Մարկին: Հերյանի ներքին էությունը, թվում է, բռնված էր որմնանկարներից եկող տենդային ջերմությամբ («Պատկերները, պատը լքելով, աննշմարելի կերպով առաջանում էին»³⁶): Խորհրդավոր հնդկահայը այս անգամ էլ գալիս է ցրելու Հերյանի ներքին կասկածներն ու տարակույսները, ամրապնդելու նրա ոգին, բարձրաձայնելու այն ձշմարտությունները, որոնք Հերյանը զգում է թերևս ներհայեցողական կերպով, ներքնատեսորեն: Հեռուներից եկած, «լեցւած սրտով, ծարաւ և տանջւած» այդ մարդը ամեն ինչ ուրիշ կերպ է տեսնում: Հայաստանը նա ընկալում է «ոչ իբրև պարզ տարածութիւն, այլ իբրև լուսաւոր և գաղտնի մի կենդանութիւն», որ պատկանում է «Սրբազան աշխարհագիտութեան, ուր ամեն մի բնական երևոյթ պատճառաբանւած է հոգեկանով և ուր մարդկային ամեն մի շարժումն մասնակցում է այդ հոգեկանին... Դա կեն-

35 Կոստան Զարեան, Նաը լերան վրայ, Պոսթրն, 1943, էջ 70:
36 Նույն տեղում, էջ 82:

դանի, մագնիսականությունով լեցած, բախտագուշակ, բնագանցական մի տարածություն է, որտեղ բոլոր նշանները գծած են, և որտեղ ամեն մի ժեստ, ամեն մի գործողություն, ամեն մի արտասանած բառ իսկ ստանում են գերագոյն նշանակություն»³⁷:

Պետրոս Մարկը պատահականորեն չէ, որ իր հուզավառ խոսքի մեջ հիշում է Լաո-Ցզիին և ընդգծում է ճանապարհի գաղափարը: Հնդկահայը նախանշում է Հերյանի հետագա կյանքի և ընթացքի ուղին. երբ մարդու նպատակը դառնում է անձի (ոչ նկարագրի) ոգեկան իմաստը: Այս հանդիպումից հետո նավապետ Հերյանը մեծ զգուշությամբ է վերաբերվում կյանքի ամեն մի մանրամասնի ու մանրադեպի: Նա իմաստ և առանձնահատուկ իմաստ է տեսնում ամեն ինչի մեջ և ջանում է իմաստավոր դարձնել իր ամեն մի քայլը, ամեն մի բառը, ամեն մի խոսքը:

Պետրոս Մարկը իր ստածողությամբ, բռնած դիրքով ու վերաբերմունքով նավապետ Հերյանի կյանքին ու գործունեությանը հաղորդում է գերագույն իմաստ՝ նրա մեջ տեսնելով ազգային ոգու և ազգային ինքնագիտակցության բարձր դրսևորում: Հնդկահայը Հերյանի ուշադրությունը հրավիրում է հայ ազգային ոգու ներքին միասնականության մեկ այլ բարձր համակարգված արտահայտության՝ հայ ճարտարապետության վրա. «Հայ Տաճարը առաջին կարևորագույն քայլն էր այդ նպատակին հասնելու համար: Ոգին համադրած էր, ոճը գտնւած...»³⁸:

Պետրոս Մարկը եկեղեցուց անհետանում է նույնքան աննկատելիորեն ու անակնկալ, ինչպես հայտնվել էր: Հերյանի անցնելիք ուղին այլևս նախանշված էր. «Ոգին է, որ ստեղծում է արտաքին դէպքերը, նա է, որ հրաւիրում է նրանց»: Նա այլևս տեսանող է, այլ կերպ է տեսնում իրերն ու երևույթները, տեսնում է ոգու աչքերով, ներքնատեսորեն: Այսպես, Մարկի անհետանալուց անմիջապես հետո նա իջնում է վանքի վարի բակը և այստեղ հայտնագործում է հայկական պարի գեղեցկությունն ու հմայքը. «Հէրեանը նայում էր հիացած: Ո՞ր էր Պետրոս Մարկը, ստածում էր նա, թող գար տեսնէր. պարը ևս ճարտարապետութիւն է և կառուցողական ոգի»³⁹:

Եվ, իհարկե, Զվարթը. Հերյանը «հայտնաբերում է» իր տանտիրոջ աղջկան, որն իր մեջ ասես ամփոփում-ամբողջացնում է երկրի ողջ գեղեցկությունն ու հմայքը: Գիմնագիայի աշակերտուհու և նավապետի միջև սկիզբ առած մաքուր ու բանաստեղծական զգացմունքը նոր իմաստ է հաղորդում Հայաստան վերադարձած մարդուն: Նա, ճիշտ է, կորցրել է Դաշենկային, բայց փոխարենը գտել է Զվարթին: Եվ դեռ չգիտի, որ իր ընթացքի ճանապարհին կորցնելու է մարդու անձնական կյանքը իմաստավորող շատ բան, որ ապրելու է անձնական մեծ դրամա, հազիվ գտած՝ կորցնելու է Զվարթին և կորցնելու է նաև օրիորդ Վարդուհի Բուդաղյանին, որը ուրիշ մի լույս պիտի տար իր կյանքին: Հետայսու Հերյանի կյանքի մեջ երկու մեծ լուսավոր կետ կա՝ նավը և Զվարթը, Զվարթը և նավը: Զվարթը կարծես Սևանի մարմնացումը լինէր: Եթե Հերյանը վերադարձել էր Հայաստան՝ հասնելու, միանալու երկրի միակ և գերագույն իմաստին, ապա Զվարթը այդ իմաստն էր:

37 Կոստան Զարեան, Նալը լեռան վրայ, Պոսթրն, 1943, էջ 86:

38 Նույն տեղում, էջ 87:

39 Նույն տեղում, էջ 88:

Հերյանի համար սկսվում են նոր օրեր: Նա ներքաշվում է Զվարթի ծնող-ների՝ պարոն Արտեմի և տիկին Արուսյակի ընտանեկան կյանքի մեջ, ամեն օր նրանց հետ քննարկում է իր ծրագրերը, նրանց մասնակից է դարձնում իր նպատակներին ու մտածումներին:

Մյուս կողմից՝ նրա առջև բացվում է Երևանի կյանքը իր գրեթե բոլոր կողմերով՝ փողոցը, շուկան, հազարավոր որբերը, քաղաքային ակումբը, մյուս վայրերը... Ի վերջո, հանդիպում է իշխանությունը ներկայացնող մարդկանց, նրանց առջև պարզում է իր ծրագրերն ու նպատակը, հավանություն է ստանում և վերջնականապես որոշում է մեկնել Բաթում, որտեղից որ եկել էր, նպատակը իրականացնելու՝ նավ ձեռք բերելու, Հայաստան հասցնելու և Սևան տանելու համար:

Նավապետ Հերյանը արդեն գիտեր, որ Սևանում մեկը՝ մի եկվոր ծովային սպա, նավ է կառուցում: Սևանում գտնում և ծանոթանում է Բեսարաբիայից եկած ծովային սպային՝ Միքայել Թումանյանին: Երիտասարդ սպան Հայաստան է եկել հոր հետ, եկել են նոր, անկախ Հայաստանի Հանրապետությանը ծառայելու, երկրի կյանքին մասնակից լինելու նպատակով: Հայրը Բեսարաբիայում եղել է դատական պաշտոնյա, ինքը՝ Նորին կայսերական մեծության տորմիդի սպա: Բեսարաբիայի հայությունը հորը իբրև պատգամավոր ուղարկել է Հայաստան, ինքն էլ, ահա, ձեռնարկել է այդ գործը՝ նավ կառուցելու գործը, չունենալով ոչինչ՝ ոչ միջոցներ, ոչ գործիքներ, ոչ անհրաժեշտ նյութեր ու պարագաներ... Եվ աղքատիկ, հնացած շորերով, մաշված, կարկատած կոշիկներով գավառական գիմնազիստի երևույթ ունեցող այս երիտասարդը ոտքով է Սևանից գալիս Երևան՝ հորը տեսնելու:

Թումանյանի հետ այս կարճ հանդիպումը ցնցում է Հերյանին: Թումանյանը փաստորեն իր նախատիպն է, իր նախօրինակը: Նա նույնպես եկել է հեռուներից, եկել է՝ երկրի ու հայրենիքի ձայնին անսալով: Իր ձեռնարկումը անհավատալի է և թվում է անիրագործելի: Թումանյանի արածը սիրագործություն է, գոհողությունը՝ մեծ և անչափելի: Այս հանդիպումը Հերյանին ստիպում է մեկ անգամ ևս քննել իր մտահղացումը ու մեկ անգամ ևս համոզվել կայացրած որոշման մեջ: Թումանյանը շինում է իր նավը, որ երկու փոքր թնդանոթ և մի գնդացի պիտի ունենա և հիսուն գինվոր և պետք է պաշտպանի Սևանի ափերը, Հերյանը մեկնում է Բաթում՝ իր նավը բերելու և Սևանա լճի վրա նավագնացության գործը սկսելու համար:

Հերյանը մեկնում է Բաթում: Այստեղ նրան հաջողվում է մի հին բարեկամի՝ Ֆյոդոր Պանտելենիչի օգնությամբ, որ եղել է նավային մի ընկերության կառավարիչը, ձեռք բերել ոչ մեծ նավ՝ «Ալբատրոս» անունով, նավը բարձել երկաթուղային գնացքը և ճամփել Հայաստան: Նավը ձեռք բերելու հաջողությունը մթազնվում է Հերյանի անձնական դրամայի առաջին արարով՝ սաստիկ հարբած Դաշենկան երկու մարդկանց հետ: Բայց Հերյանի դրաման նոր-նոր էր միայն սկսվում...

1910-1920-ական թվականների հայկական իրականության մեջ Թիֆլիսը միշտ ներկա է եղել և երբեմն շատ վճռորոշ ու կարևոր դեր կատարել: Կոստան Զարյանը գիտեր Թիֆլիսը, տեսել էր մի քանի անգամ՝ 1894-ին, երբ ավագ եղբայրներից մեկը՝ Լևոն Եղիազարյանը, նրան տանում էր Ֆրանսիա, 1905-ին՝ երբ շփացած երիտասարդը հեղափոխություն էր խա-

դում («...մինչ ես, մասնաւոր կառք նստած՝ երկու հոյակապ ձիեր, ռուս դասական կառապան և գեղեցիկ մի պռոնիկ՝ ռուսը էի փոխադրում»⁴⁰), 1919-ի աշնանը, երբ մի քանի օրով պիտի գար Հայաստան: 1919-ը հիասթափության տարի էր («1919: Դ՛մ է Թիֆլիսը...»⁴¹), և՛ Անցորդի, և՛ Արա Հերյանի համար: Սակայն Թիֆլիսը պետք էր պատկերել, պատկերել այնպես, ինչպես որ այն կա՝ իր հավակնություններով, մակերեսայնությամբ, կինտոյական հոգեբանությամբ, քաղքենի կյանքով ու կենցաղով և մանավանդ Հայաստանի ու հայերի հանդեպ իր ունեցած, թվում է, այլևս մշտամնա վերաբերմունքով:

Կոստան Զարյանը 1920-ական թվականների առաջին տարիների Թիֆլիսը հրաշալիորեն պատկերել է և՛ «Անցորդը և իր ծամբան» վեպում, և՛ «Բանկօօպը և մամուլի ոսկորները» վեպում: Սա ինքնին արդեն նշանակում է, թե գրողը ինչ կարևորություն է տալիս այդ թեմային և այդ խնդրին:

Բայց վեպի տվյալ հատվածը չափազանց կարևոր է ոչ միայն այն բանով, որ գրողը հրաշալի է պատկերել քաղաքի գունագեղ կյանքն ու ճշմարտացի դիմապատկերը, այլև նրանով, որ վեպի այդ հատվածում Հերյանի վաղեմի բարեկամ, Հայաստանի պետական պաշտոնյա Պերոնյանը «Մի բաժակ թեյ» կոչվող նշանավոր սրճարան-թեյարանում նրան ծանոթացնում է իր բարեկամների՝ նկարիչ Հայկ Շուշանի, բանաստեղծ Կարայի և գրականագետ Սուլթանյանի հետ: Հանդիպումը սկիզբ է դնում կարևոր ու նշանակալից գրույցի: Կարան, անշուշտ, Կարա-Դարվիշն է, ֆուտուրիստ-բանաստեղծ, Կոստան Զարյանի բարեկամը: Սուլթանյանը, պետք է ենթադրել, գրականագետ Հարություն Սուրխաթյանն է: Դժվար է կռահել, թե ով է Հայկ Շուշանը: Եվ այնուամենայնիվ, տարբեր ասպարեզների հայ մարդիկ՝ նավապետ, պետական պաշտոնյա, բանաստեղծ, նկարիչ և գրականագետ, մեծ և կարևոր գրույց են սկսում Հայաստանի անցյալի ու ներկայի, հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական ծանր վիճակի, նրա քաղաքական ճակատագրի, բարեկամների ու թշնամիների, հայ մարդու կողմնորոշման, հայ քաղաքացու պարտականությունների ու անելիքների մասին: Միմյանց լրացնելով, ընդմիջելով ու հուշելով՝ նրանք տալիս են պատմական ժամանակի, ժողովրդի հոգեկան կացության և բարոյական նկարագրի համոզիչ վերլուծական պատկերը: Զարյանը առհասարակ այդպես է վարվում. հեղինակի հիմնական ու կարևոր ասելիքը գոյանում է գործող անձանց խոսք ու գրույցի ընթացքում, վեճի ու քննարկումների մեջ այնպես, որ ընթերցողն ինքը ներքաշվում է այդ վեճերի մեջ, մասնակից լինում մտքերի ու տեսակետների բախումին: Այդ հանդիպման ավարտին էլ տեղի հայ թերթի խմբագրից իմանալով, որ Հայաստանում քաղաքական վիճակը նորից վատացել է, և որ երկրում հայտարարված է ռազմական դրություն, Հերյանը, ինչպես նաև Պերոնյանն ու Սուլթանյանը որոշում են անմիջապես մեկնել Հայաստան:

Հերյանը հասնում է Հայաստան, և այստեղ սկսվում են նրա տառապանքները նավի շուրջը: Հիմա Հերյանը տեսնում է հայ մարդու նկարագրի մյուս երեսը: Բոլորը իրեն ու իր գործին վերաբերվում են զգուշությամբ, կասկածներով, խորթությամբ... Նավապետը ստիպված է պայքարելու ամեն

40 Կոստան Զարյան, Անցորդը և իր ծամբան, Եր., 2010, էջ 143:

41 Նույն տեղում, էջ 145:

բանի համար, ամենքի դեմ: Նա Ալեքսանդրապոլ է հասնում բոլշևիկյան ապստամբության օրերին և ականատես է լինում ներքին ահավոր ջլատումների: Վեպի գլխավոր հերոսի հոգեկան ամենածանր, ճգնաժամային պահերին նրան ոգեկան ջատագովություն է դառնում որևէ իմաստավոր իրադարձություն: Այդպիսի միջադեպ է կույր աշուղին հանդիպելու հատվածը: Աշուղը թեն կույր է, բայց լցված է կյանքի ներքին տեսողականությամբ և իմաստուն մարդ է: Հերյանին հուզող հարցերին հետաքրքրական պատասխաններ է տալիս, որոնք տարբեր են Հերյանի ըմբռնումներից, բայց չափազանց գրավում են նրան: Հերյանը կույր աշուղի և գյուղացիների հետ գիշերում է դաշտում, բաց երկնքի տակ: Անսպասելի տեղատարափ անձրևը, որ շատ նման էր ջրհեղեղի, բոլորին քշում է թաքստոցները: Շատ շուտ ջուրը ծածկում է ամեն բան, և գնացքին բարձած նավը, նավապետ Հերյանը, գյուղացիները, թվում է՝ ողջ երկիրը, հայտնվում են խորհրդանշական՝ նախատեղծ ու ճակատագրական իրավիճակում:

Հերյանը հասնում է հանրապետության մայրաքաղաք: Նա ձևեր և միջոցներ պետք է գտնի նավը Երևան, ապա Սևան հասցնելու: Երևանում նրան մեծ հարված է սպասում. իր վարձած սենյակում այլևս ուրիշ մարդ է բնակվում, բայց այդ մարդը գբաղեցրել է ոչ միայն իր սենյակը, այլև իր տեղը Զվարթի կյանքում: Նոր կյանքի երազը փուլ է գալիս միանգամից: Կողքի փողոցի գինետանը երաժշտությունը թարգմանում է Հերյանի հոգեկան տառապանքները, վիրավորանքը, կորստի ցավը, անձնական գեղեցիկ ապրումի հուշը: Եվ անքուն գիշերվա մղձավանջից, հոգեկան անկումի դրամայից հերոսը դուրս է գալիս, ազատվում է անսպասելի ձևով: Վաղ առավոտի թարմության մեջ նա երեք քայլերով հասնում է մինչև Կոնդի բարձունքը. «Երբ հասա Կոնդի բարձրության վրայ, լուսաբացը իր բոլոր կրակները դուրս հանեց, ողողեց նրա աչքերը, յափշտակեց նրան:

Հեռում, Արարատի ձիւնածածկ գագաթից ճառագայթների մի հեղեղ էր թափում: Վարի լայնատարած դաշտը, կաթնագոյն մշուշից կամաց կամաց ազատելով, արթնանում էր և անձայն հնչում կանանչ մի նուագի նման: Մտակայ պարտեզներում թռչունները երգում էին: Օղը հարբած էր:

Աշխարհը վերածնունդ էր հզոր և գեղեցիկ մի կեանքով:

Հերեանը, որին ամբողջ գիշերը խմած Հայաստանի ուժեղ գինին չէր կարողացել հարբեցնել, իրեն զգաց գինովցած և երջանիկ: Շրթունքների վրայ ուրախ պարի մի անորոշ մեղեդի ման եկաւ:

Ինչ հարուստ և հզոր և գեղեցիկ էր այս երկիրը»⁴²:

Ահա երկիրը: Երկիրը և իր նավը: Հերյանը ամենևին էլ պարտված չէ: Իր պայքարը դեռ առջևում է: Մինչդեռ ծովային սպա Միքայել Թումանյանը հաղթել էր. նրա կառուցած փոքրիկ ռազմանավը, որ կրում էր «Աշոտ Երկաթ» պատմական անունը, պատրաստ էր լողարկման: Նավը ջուրը իջեցնելու համար շքահանդես է լինում, գալիս են իշխանության մարդիկ, երկրի վարչապետը: Ներկա է հայր Թումանյանը՝ այդ իրադարձությամբ երջանիկ մի մարդ, ներկա են գյուղացիներ ու եկվորներ: Ծովային սպա Թումանյանը իսկական հայրենասեր անձնավորություն է՝ հպարտ ու արժանապատիվ: Նա տեսել է բոլշևիկներին Ռուսաստանում, գիտի նրանց վայրագ գազանու-

42 Կոստան Զարեան, Նաը լերան վրայ, Պոսթրեն, 1943, էջ 263:

թյունները, գիտի, թե ինչի են ընդունակ նրանք, երբ հասնում են իշխանության: Հիմա իր նավի գյուղացի նավագներին պատմում է նրանց դատությունների մասին:

Սևանա լճի շուրջը մալականներ են ապրում: Գրողը լավ է նկարագրել նրանց կյանքը, կռահել է նրանց տիպերը, հասկացել տրամադրությունները: Եգոր Կոժուխինը գտնված կերպար է, ճշգրիտ, համոզիչ, պատկերավոր: Ռուս խորամանկ մուժիկը իր անձնական շահից վեր ոչինչ չի ճանաչում: Կղզում բանտարկված բոլշևիկներ կան, որոնք այստեղ են հայտնվել ապստամբությունից հետո: Եվ ազատության մեջ հայտնված բոլշևիկներն էլ հենց առաջին օրը, Եգոր Կոժուխինի մատնությամբ և օգնությամբ, գնդակահարում են ծովային սպա Միքայել Թումանյանին՝ բեսարաբացի հայ իրավաբան, լուռ և ողբերգական Հովակիմ Թումանյանի միակ որդուն: Միքայել Թումանյանը Առաջին հանրապետությունը խորհրդանշող կերպար է, և իր ձակատագիրը Առաջին հանրապետության ձակատագրի ողբերգական ամփոփումն է:

Հերյանը իր նավը դեռ պետք է տեղ հասցնի: «Ալբատրոսը» հասել էր Երևանի մերձակայքը և դեռ պիտի մտնի քաղաք, անցնի քաղաքով՝ Սևան հասնելու համար: Նավը հիմա բարձված է գերաններից շինված մի հսկա քարշակի վրա, որին լծված է մի քանի զույգ եգ: Կենդանիները դժվարությամբ են տեղաշարժում կառուցվածքը: Նավապետը, ժողովուրդը, նավի շուրջը խոնված ամբոխը հարայ-հրոցով փորձում են հարկադրել կենդանիներին շարժվելու, քաշելու նավի ծանրությունը: Եվ այսպես նավը, սանտիմետր առ սանտիմետր, մոտենում է Երևանին: Տեղի ունեցողը այնքան անսովոր է, այնքան անբնական՝ նավը եզների քարշակի վրա, որ շատ շուտով նավի և նավապետի շուրջ այլազան խոսակցություններ են սկսվում, երևակայական պատմություններ են պատմվում, որ շուտով էլ վերածվում են զարմանալի առասպելի: Այս էջերում գրողի նրբամիտ հումորն ու հեգնանքը պատկերվածին տալիս են մի փոքր գավեշտական բնույթ՝ սատիրական որոշ երանգով: Նավի շուրջ խոսքն ու զրույցը, զանազան պատմությունները աճում են այնքան, որ ընկերափիլիսոփայական տեսություններ են ստեղծվում, եզրույթներ ու հասկացություններ են հորինվում, մեջտեղ են հանում «հէրեանականութիւն» բառը, դեռ դրա վրա էլ որոշակի համակարգ են փորձում ստեղծել՝ «տեզիս՝ գաղափարի հրամայականը, հակատեզիս՝ իրականութեան դժուարութիւնները, համադրատեզիս՝ յաղթահարում, հէրեանականութիւն»⁴³:

Վեպի հիմնական առանցքը Արա Հերյանն է ու իր նավի պատմությունը: Վեպի մյուս բոլոր կերպարները հրապարակ են գալիս՝ կապված Հերյանի հետ: Նրանցից մի քանիսը, օրինակ՝ Պերոնյանը կամ Միքայել Թումանյանը, թեպետև ինքնուրույն ու ամբողջական կերպարներ են, այնուամենայնիվ գալիս են ամբողջացնելու Հերյանի կերպարի մեջ գրողի ամփոփած բուն ասելիքը: Հերյանը այդպես հարաբերությունների մեջ է մտնում պետական հիմնարկների, պաշտոնյա մարդկանց հետ, և այդ հարաբերություններից ամեն մեկը պարզում է իրականության որևէ կողմը, հայկական կյանքի որևէ գիծը: Գրողը դա անում է նրբորեն, մեծ վարպետությամբ: Հայաստանի

43 Կոստան Զարեան, Նալը լեռան վրայ, Պոսթըն, 1943, էջ 286:

գլխին ամպեր են կուտակվում: Տագնապն ու ահը օրեցօր աճում են: Երիտասարդ հանրապետությունը վտանգի առաջ է կանգնած: Անկարելի է, որ վեպում հայ գինվորականության պատկեր ու նկարագիր չլիներ: Եվ ահա վիպական գործողությունների մեջ են հայտնվում նոր հերոսներ՝ «Բարգէն Միրանեանը՝ հեծեալ հարիւրեակի գլխապետ՝ սևլուկ, գանգրագեղ, տաք, մի քիչ դանդաղ, բայց պարզ, բնագոյային, ոգևորող մի երիտասարդ» և իր «շիկավարս ու գեղեցիկ կինը»⁴⁴: Գեղեցիկ ընտանիք է Միրանյանի ընտանիքը, ներդաշնակ ու նրբավար: Ինքը՝ Բարգէն Միրանյանը, «սիրում էր իր կնոջ, երաժշտութիւնը, լաւ ուտելը և իր հարիւրեակը»⁴⁵: Նա գինվորական պատվի ու պարտքի բարձր զգացում ունեցող անձնավորություն է: Միրանյանը նախկին նավթահորերի սեփականատեր հարուստ ընտանիքի զավակ է, ստացել է նուրբ դաստիարակություն, գիտի լեզուներ և սիրում ու հասկանում է դասական երաժշտություն: Այստեղ էլ, թվում է, հեղինակը իր անձնական կենսագրության ինչ-ինչ գծեր տվել է իր սիրելի հերոսներից մեկին: Միրանյանը հայ բարձր ու արժանապատիվ գինվորականության տիպարն է, նրա մարմնացումը, խորհրդանիշը: Գրողը նրան շատ կարճ և ազդեցիկ է բնութագրում՝ «վայելուչ, ձկուն, կտրիճ»:

Միրանյանների ընտանիքի հովվերգական գեղեցկությունը պատկերելուց հետո գրողը պատկերում է Հայաստանի աշունը: Զարյանը բնությունը պատկերելու, բնությունը շնչավորելու, անձնավորելու, բնության ներքին շարժումները բանաստեղծական աչքով տեսնելու անգերազանցելի վարպետ է: Երբեմն իր մեկ բառը, մեկ մակդիրը, մեկ համեմատությունը, մեկ պատկերը զարմանալիորեն վերափոխում է գրողի խոսքը՝ ասվածին տալով նոր խորք, իմաստ ու բովանդակություն: Հայաստանի աշնան նկարագրությունը վեպի այս հատվածում առանձնահատուկ իմաստ ունի: Արարատյան դաշտի աշնան նկարագրությունը երկրի կատարյալ գեղեցկության, նրա հոգեկան ու ֆիզիկական միասնության բանաստեղծական անմրցելի պատկերումն է. «Ով չի տեսել Արարատեան դաշտի աշունը՝ ոչինչ չի տեսել:

Նա գալիս է դանդաղ, խոհուն և կարմիր քայլերով. լեռների կատարից իջած թեթև զովը իջնում է ամառայ թողած ձերմակ հրդեհների վրայ, մաղում է օդը, ալքիմիկոսի իր աշխատանոցում թանկագին և զարմանալի մետաղների բաղադրություններ է ձուլում, հողերի վրայ լոյսեր ման ածում, ծառերի մէջ մոմեր վառում և՛ դեղին և մեծդի՛ յօրինում է այնպիսի նւագներ, որոնց մասին կարելի չէ պատմել, որովհետև նրանք գալիս են կեանքի և մահի սահմանները անցնող անայտ վայրերից:

<...>

Ով չի տեսել Արարատեան դաշտը աշնան ժամանակ՝ չի կարող երևակայել իսկ ինչպիսի խոր հոգեկանութեան, ինչպիսի վերացման, ինչպիսի ներուժ խաղաղութեան կարող է հրաւիրել բնութիւնը:

Զինագագաթ լեռները գրկող, ոսկեայ վարսերով, սարսռուն, համատարած մի անդորրութիւն: Դեղին բոցերով այրող կաղամախների շարքեր: Ծանրացած մրգաստաններ, պսպղուն պարտէզներ, պղնձների հետ հալւած հորիզոն և, խորացած, ճառագայթող, յստակ մի երկինք:

44 Նույն տեղում, էջ 289:

45 Նույն տեղում, էջ 289:

Ամեն ինչ խորասուզում է, մտածում, բոցկլտում»⁴⁶:

Կոստան Զարյանի ողջ գրականության մեջ, ինչպես և այս վեպում, չկա ոչ մի պատկեր, որ ինքնանպատակ լինի: Այս դեպքում էլ Միքայանի խաղաղ և գեղեցիկ ընտանիքի և Հայաստանի ոսկե աշնան պատկերները ինքնանպատակ չեն: Զարյանը վարվում է հայ նախնի մատենագիրների և ժողովրդի դարաշրջանի դասական գրողների պես՝ օգտագործելով զգացմունքային հակադրության հնարքը: Հայաստանը մեծ կորուստների և անկումների շեմին է, և շատ շուտով ողբերգության հզոր ալիքը կփլվի նրա վրա. չի լինի այլևս հայ երիտասարդ մարդու խաղաղ և երջանիկ ընտանիքը, և Հայաստանի հեքիաթային ոսկե աշնանը կհաջորդեն անկումների սարսափն ու անվերադարձ կորստի այրող զգացումը:

Նորաստեղծ պետությունը Հերյանի նավով զբաղվելու ոչ ժամանակ ունի, ոչ հնարավորություն: Ամեն ինչ մնում է Հերյանին. նա պետք է միջոցներ որոնի՝ փող ու բանող անասուններ գտնի նավը «վերշոկ առ վերշոկ» տեղաշարժելու: Իսկ Հայաստանում աշուն է, հայ գյուղացին զբաղված է վերահաս ձմեռվա հոգսը հոգալով, և ոչ ոք անգամ իր կաղ եզը չի տա Հերյանին: Բայց նա չի նահանջում, արտառոց որոշում է առնում. նավը ի պահպանություն հանձնել քաղաքի խուժանին՝ անապաստաններին, և մեկնել գյուղերը բանող ուժ գտնելու:

1918–1920–ական թվականներին, ավելի ձիշտ՝ 1915 թվականից հետո Հայաստանը հեղեղած հարյուր–հազարավոր որբերի ու անապաստանների պատմությունը մեր իրականության հետեղեռնյան շրջանի ամենազարհուրելի էջն է: Եվ այդ պատմությունը դեռ չի գրվել, իրականության ստույգ պատկերը՝ հայ որբերի կյանքի առումով, դեռ չի տրվել: Հայ նորագույն գրականությունը կան լռում է այդ մասին, շրջանցում է իրողություններն ու իրականությունը, կան տալիս է միակողմանի, ավելի ձիշտ՝ թերի ու կողմնակալ պատկերացում. եթե երկրում արդեն խորհրդային իրականություն էր, ուրեմն չէր կարող ամեն բան կան որևէ բան շատ վատ լինել: Միակ գրողը, որ մեզանում խոսել է այդ մասին իսկական գեղարվեստական գրականությամբ, իհարկե, Ստեփան Զորյանն է իր «Սկսնակ հանցագործներ» (1923) գրական ցնցող ակնարկ–պատկերով, «Խուժան Արշոն» (1926) վիպակով և «Սև Սեթոն» (1933) սքանչելի պատմվածքով⁴⁷: Բայց Զորյանի այս գործերը վերաբերում են Երևանի կյանքի քիչ ավելի ուշ շրջանին: Այն, ինչ պատկերում է Կոստան Զարյանը և պատկերում է շոշափելիության չափ հստակ, տեսանելի ու համոզիչ, ուղղակի զարհուրելի է: Վեպի նախորդ էջերում քաղաքային ակունքից դուրս գալիս անապաստանների գազազած ռհնակը,– ուղղակի այլ բառ դժվար է գտնել ամեն ինչ կորցրած, մշտապես սոված, անհունորեն տառապած, աշխարհի ու մարդկության դեմ քիչ է ասել, թե զայրացած ու կատաղած, օթևանազուրկ, փողոցներում մի կերպ իրենց գոյությունը քարշ տվող անապաստան երեխաների համար,– պատրաստ է ծվատելու, ուղղակի ոչնչացնելու նավապետ Հերյանին: Իրոք որ աշխարհը չարժե երեխայի մեկ հատիկ արցունքը, մինչդեռ հազարավոր

46 Կոստան Զարյան, Նաը լեռան վրայ, Պոսթըն, 1943, էջ 289:

47 Տես Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու տասներկու հատորով, հատ. 5, Եր., «Սովետական գրող», 1981, հատ. 11, Եր., «Սովետական գրող», 1985:

հայ երեխաներ վերածվել են ուրուների և ուրվականների, հարյուրները մեռնում են փողոցներում ու պատերի տակ: Հեռյանը հազիվ է պրծնում նրանց ահավոր դատաստանից, փրկվում է նույնիսկ ոչ թե ատրճանակը հանելով և օդ կրակելով, այլ ամոթալի փախուստով: Եվ հիմա Հեռյանը դիմում է նույն անապաստաններին՝ նրանց վստահելով նավի պահպանությունը, խնդրելով գորավիզ և ջատագով դառնալ իր գործին: Այս խուժաններից երեքը՝ Մարտինը, Աշոտը և Շահենը, հանձն են առնում նավի պահպանությունն ու խնամքը, իսկ ինքը մեկնում է գյուղերը՝ քարշող եզներ գտնելու:

Մի նոր փորձություն է սկսվում նրա համար, մի դառը փորձություն՝ ի մոտո հանդիպումները հայ գյուղացիներին, հայ գյուղի իր ձանաչումը: Հեռյանը շրջում է հայ գյուղերը, հանդիպում է մարդկանց, խնդրում է, բացատրում, համոզում, բայց անարդյունք. ոչ ոք չի ցանկանում իր եզները կամ եզը, իհարկե, ժամանակով, ստացականով և պարտավորագրով, հանձնել Հեռյանին: Ոչինչ չի օգնում՝ ոչ ազգային գործի վկայակոչումը, ոչ պետական պաշտոնյաների գրավոր հանձնարարականները, ոչ նյութական ու դրամական շահագրգռության փորձերը: Ի վերջո Սելաձոր գյուղում գտնվում է մի բարի գյուղացի, որ սաստիկ հիվանդացած ու ջերմի մեջ ընկած Հեռյանին ընդունում է իր տուն, խնամում է նրան, ոտքի կանգնեցնում և «երկու օր յետոյ – երկայն վիձելուց, պաղատելուց և վճարումների համար ստորագրություններ և երաշխաւորութիւններ տալուց յետոյ – Հէրեանը, եզների ետևից ընկած, հասաւ մայրաքաղաք»⁴⁸: Այստեղ նա գտնվում է գրեթե անելանելի դրության մեջ. «...ոչ ոք չէր մտածում այն դժարութիւնների մասին, որ Հէրեանը ստիպած էր յաղթահարելու: Իր անձնական դրամները նա գրեթէ ամբողջովին ծախսել էր: Պէտք էր ապրել, եզները կերակրել, գիւղացիներին գոհացում տալ, տղաների (իրեն օգնող անապաստանների. – Ե.Տ. -Խ.) մասին հոգալ: Իր սրտին մօտ մի քանի արժէքաւոր առարկաներ վաղուց է ծախսել էր: Իշխանութիւնը դրամ չունէր և պետական գրասենեակներից մի բան ստանալը դարձել էր մի տանջանք»⁴⁹:

Այս ամենը քիչ էր, երկրում էլ շատ ծանր դրություն էր. բոլոր սահմանները վտանգված էին, ներսում ահավոր ջլատումներ կային: Մեր պատմության չափազանց կարևոր, վճռորոշ ժամանակաշրջանը ներկայացնող այս վեպում իրական-պատմական իրողությունների և իրադարձությունների մանրամասն, փաստագրական նկարագրություններ ու պատկերումներ չկան:

Ինչպես հեղինակն է իր նախաբանի առաջին տողով պնդում, այս վեպը բուն իմաստով պատմական վեպ չէ, սակայն նրանում կա պատմական ժամանակի և իրականության, պատմական իրավիճակների և իրադարձությունների ձգբիտ, հավաստի զգացողություն և ընկալում: Նավապետ Հեռյանը շատ լավ է զգում երկրում ստեղծված ծանր իրավիճակը և խորապես ապրում է այն՝ իբրև մեր ժողովրդի գլխին կախված ահռելի վտանգ: Եվ ահա հոգեկան այսպիսի ծանր ապրումներով և գրեթե անելանելի իրավիճակի դառն զգացողությամբ համակված Հեռյանին հանգամանքների բերումով վիճակվում է ծանոթանալ, ավելին՝ ի մոտո, ճաշատեղանի շուրջ,

48 Կոստան Զարեան, Նաը լերան վրայ, Պոսթըն, 1943, էջ 319:
49 Նույն տեղում, էջ 321:

իրենց նկարագրի կատարյալ մերկության մեջ տեսնել հայ քաղքենուն՝ ցինիկ, լկտի, որևէ սրբություն չունեցող, կյանքի իմաստը միայն կուշտուկուռ կենցաղի մեջ տեսնող, ազգային որևէ զգացողությունից զուրկ, հայկական իրականության խիստ վտանգավոր այդ խավի մարդկանց: Դրանք Պյոտր Բաղդասարովիչ Տանձիբարովներն են, Ստեփան Մարկոսովիչներն ու իրենց նմանները: Նրանց իրական դեմքը տեսնելը, նրանց էությունը ճանաչելը այնպես են ցնցում Հերյանին, որ գրեթե միշտ հավասարակշռված մարդը դուրս է գալիս ավերից, ցինիզմի ու լկտիության դեմ անզորությունից շրջում է սեղանը և հեռանում այդ հավաքույթից, իրականում՝ գիշատիչների խրախճանքից: Եվ այն էլ՝ խրախճանք ժանտախտի ժամանակ: «Ռեսախոս» հայ քաղքենին միշտ էլ եղել է և այսօր էլ մնում է հայության մեծագույն չարիքը, հայկականության, ազգային ոգու, ազգային զգացողության և մտածողության գաղտնի, միշտ թաքնված թշնամին. «Դո՛ւք, սողո՛ւն, գիշատի՛չ, բորենո՛ւ հոգի՛ներ, - պռռացել էր Հերեանը կատաղութեան վայրկեանին»⁵⁰:

Քաղաքական իրադրությունը երկրում օր օրի փոխվում է, տագնապը՝ մեծանում, ահը՝ սաստկանում: Թուրքական զորքերը շարժվում են դեպի Կարս, Կարմիր բանակը սպառնում է Վրաստանին և Հայաստանին: Հերյանի հարևան Բարգեն Միրանյանի ընտանիքում ծանր իրավիճակ է՝ գլխապետը պարտավոր է մեկնել զորահավաքի. պատերազմը անխուսափելի է այլևս: Տանձիբարովների ներկայությունից հազիվ պրծած Հերյանը ականա ներքաշվում է Միրանյանի ընտանեկան ծանր հոգեվիճակի մեջ: Միրանյանի կինը, որ միայնակ պիտի մնա, բաժանման ծանր դրամա է ապրում և անվերջ լաց է լինում, ինքը՝ Միրանյանը, որ քանի անգամ ուղիղ նայել է մահվան աչքերին, այս անգամ անխուսափելի ողբերգության ծանր զգացողություն ունի և նույնիսկ պահ է գտնում Հերյանին առանձին հանձնարարություն տալու իր մահվան պարագային: Մի խոսքով՝ ստեղծվում է ծանր, լարված հոգեվիճակ երեքի համար էլ:

Եվ այս մղձավանջային իրավիճակից դուրս գալու միայն մի ելք, մի միջոց կա: Դա մշակույթի և, իհարկե, հայ ոգու, հայ մշակույթի ներքին հարստությունն ու զորությունն է, որ կարող է ի բաց վանել մահվան զգացողությունն ու սարսափը և մարդուն ոգի ներարկել, նրան տալ հավերժության, անմահության զգացում, կյանքին և տեղի ունեցող իրադարձություններին խաղաղ, ներհուն, իմաստուն աչքերով նայելու կարողություն, այլ խոսքով՝ մահկանացու մարդուն հաշտեցնել մահվան հետ:

Եվ Հերյանի ու Բարգեն Միրանյանի միջև սկսվում է մի խորունկ և իմաստալից գրույց, որ տևում է մինչև լուսաբաց: Այս էջերը վեպի լավագույն էջերից են և բովանդակում են մշակույթի ու մանավանդ հայ արվեստի շուրջ Կոստան Զարյանի նվիրական մտածումները՝ մաքուր, հստակված, գրեթե ճշգրիտ բանաձևի հասցված դրսևորումներով: Խոսակցությունը սկսվում է երաժշտությունից: Միրանյանը ցանկություն է հայտնում լսելու Բախի երկու ջութակի կոնչերտոն: Նա Բախի այդ երկը համարում է «մահի և սիրոյ բախտաւոր խօսակցութիւն» և ոչ մի կերպ չի կարողանում համադրել պայծառ և խորհրդավոր ջութակների երկխոսությունը «տգէտ, արի-

50 Կոստան Զարեան, Նալը լերան վրայ, Պոսթըն, 1943, էջ 335:

նարբու, կեղտոտ տաճիկի հետ»⁵¹: Զրույցը շարունակվում է շատ կարևոր ու իմաստալից նյութերի շուրջ և, ի վերջո, հանգում է հայ ստեղծագործ հանձարի թերևս ամենաբարձր դրսևորմանը՝ հայկական ճարտարապետությանը:

Ժամանակ անց հարյուրապետ Բաբգեն Միրանյանը պատերազմի դաշտում իր քաջությամբ, ազնվությամբ, բարեշնորհ անձնագոհությամբ և, վերջապես, ողբերգական մահով հաստատում է իր անձի ու նկարագրի, իսկական հայրենասեր հայ մարդու մեծ վայելչությունը: Ծանր վիրավորված Միրանյանը կյանքին հրաժեշտ է տալիս դժվար վիրահատությունից հետո, իր ապրած կյանքի ու պարտքի հստակ գիտակցությամբ, առանց ավելորդ զգացմունքայնության և արժանապատիվ:

Հիմա, գրուցելու միջոցին, այն զգացումները, որ ունի Միրանյանը արվեստի ու մշակույթի, մասնավորապես հայ ճարտարապետության հանդեպ, իհարկե, անծանոթ չեն Հերյանին: Ավելին, Հերյանը ողջ կյանքը ապրել է դրանցով: Կոստան Զարյանը հայ ճարտարապետությունը համարում էր հայկական ոգու բարձրագույն դրսևորում, հայ ժողովրդի աշխարհաճանաչողության և կենսափիլիսոփայության ինքնօրինակ արտահայտություն: Հայ ժողովուրդը իր ճարտարապետական կառույցների մեջ ներդրել-արձանագրել-գաղտնագրել է իր ողջ իմացությունն ու ստեղծագործական հանձարը, աշխարհը, բնությունը, մարդկանց տեսնելու իր կերպը, պատմության ու ամենակուլ ժամանակի դիմաց ստեղծագործությամբ կանգնելու իր կարողությունը: Հայ մարդու համար Հռիփսիմեն, Զվարթնոցը, Անիի Մայր տաճարը, Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին և հազարավոր մեր այլ կառույցներ ոչ միայն սոսկ եկեղեցիներ են ու տաճարներ, այլև ժողովրդի ներուժ կարողությունը, ոգեկան հզորությունը դարերով իրենց մեջ ամբարած սրբարաններ, որոնք այցելու հայերին, կրոնասեր թե պարզ ուխտավոր, փոխանցում են այն մոգական ուժն ու զորությունը, որ ամփոփված է իրենց մեջ: Ի պատիվ մեր հեղինակի՝ պետք է ասել, որ մինչև Կոստան Զարյանը հայ գրականության մեջ հայ ճարտարապետության այսօրինակ ընկալում չկա: Մեր իրականության մեջ եկեղեցիները սոսկ կրոնական կառույցներ են, կրոնական արարողության սրբատեղիներ և ուղղակի պատմական անցյալն ու ժամանակը վկայող պատմական հուշարձաններ: Թվում է՝ ժամանակակից մարդը ոգեկան կապ չունի այդ ճարտարապետության հետ. հայ ճարտարապետության ուժը, գեղեցկությունը, մարդասիրական ոգին, համակարգի կերպ ունեցող ստեղծագործական ու էսթետիկական ներքին կարողությունը ոչինչ ընդհանուր չունի ժամանակակից հայ մարդու վարքի և գործունեության հետ: Համենայն դեպս, վերջին հարյուրամյակի հայ մարդու իրականությունն այդ է վկայում, և հայ գրականությունը իրոք անմասն է մնացել այդ ամենից: Վերջին տասնամյակների հայ գեղարվեստական գրականությունը նույնիսկ չի արտացոլում հայ կառուցողական ոգու ֆիզիկական աշխարհագրությունը, ինչը շատ դառն իրողություն է և տեղիք է տալիս տխուր եզրակացությունների: Եվ մեզանում միայն Կոստան Զարյանն է, որ և՛ գեղարվեստական երկերում, մասնավորապես զուտ հայկական նյութի վրա կառուցված «Անցորդը և իր ճամբան», «Բանկօսպը և մամուլի ոսկորները», «Նալը լերան վրայ» վեպերում, և՛ տասնյակ ու

51 Կոստան Զարյան, Նալը լերան վրայ, Պոսթըն, 1943, էջ 339:

տասնյակ էսսեներում, հողվածներում ու դասախոսություններում առանձնակի իմաստ և նշանակություն է տեսնում հայ կառուցողական արվեստի մեջ, տասնյակ տարիներով հետամուտ է հայ ճարտարապետության ոգու էության մեջ ներթափանցելու, հասու լինելու նրա ներքին խորհրդին: «Նաւը լերան վրայ» վեպի էջերում քանիցս հայտնվում են հայ ճարտարապետության կարևորագույն մարմնացումներն ու խորհրդանշանները՝ վեպի ընթացքին և գործողություններին ոգեկան իմաստ և բովանդակություն հաղորդելու համար:

Միրանյանի՝ ռազմաճակատ մեկնելուց հետո Հերյանին նոր անակնկալ է սպասում. Բաթումից գալիս է նավային իր ընկերության երբեմնի կառավարիչը, «Ալբատրոս»-ը Հերյանին վաճառած պաշտոնյան, հին բարեկամ Ֆյոդոր Պանտելենիչը: Բաթումում նրան գրկել էին ամեն ինչից, խլել ողջ ունեցվածքը և առանց հույսի ու կոպեկի նետել փողոց: Նա էլ օրեր շարունակ փողոցներում անտուն ու անօթևան թափառելուց հետո, ապավինելով Հերյանի հույսին, գալիս է Հայաստան, նոր հոգս ու նոր փորձանք դառնալով նավապետի գլխին: Ֆյոդոր Պանտելենիչ Դաստակովի կերպարը վեպում մարմնավորում է Ռուսաստանի ու ռուսական իրականության ներկայությունը հայկական կյանքում՝ միևնույն ժամանակ երևան բերելով ռուսական մանր չինովսիկի և ռուս մուժիկի խառնուրդ ներկայացնող նրա էությունն ու նկարագիրը: Կարելի է ենթադրել, որ այս կերպարի նախատիպը եղել է Սևանի նավագնացության հիմնադիր Երվանդ Գասպարյանի առաջին օգնական, հետագայում նրան փոխարինած ռուսագգի Միխայիլ Նեչակը⁵²:

Մինչ այս, մինչ այն, նավը հասնում է Քանաքեռի բարձունքը և մնում է ժայռի վրա կեցած, հայկական երազը առժամանակ կանգ է առնում: Երկիրը հայտնվում է պատերազմական ծանր իրավիճակի մեջ:

Մինչև նավի վերջնական կանգ առնելը Հերյանը գլխովին տարված է նավով. քաղաքական անցուդարձը թեպետ տեսնում և զգում է, բայց արձագանքում է մի տեսակ անուղղակիորեն: Երկրի քաղաքական կյանքն ու իրավիճակը, թվում է, հեռու են նավապետ Հերյանից, թեև նա իր էության ամեն մի բջիջով ապրում է այդ կյանքը: Հիմա արդեն ժամանակ ունի ավելի հանգամանորեն տեսնելու և ընկալելու երկրի քաղաքական իրավիճակը: Անտեսանելի պատերը մոտենում, փակում են նրա մտային հորիզոնը: Բոլշևիկները այլևս բացահայտ քարոզում են քաղաքի փողոցներում, ժողովուրդը հուսահատ է, մոտենում է «մեծ դրամայի վերջին գործողութիւնը»⁵³: Կոստան Զարյանը նուրբ հոգեբան է և նուրբ դիտող: Շատերի պես Հերյանի մեջ նույնպես մի վայրկյան հետին հույս է արթնանում. «Այդ մարդիկ, մտածեց նա, որ այդքան համոզված խօսում են, նրանք ևս հայեր են չէ՞: Նրանք ևս ապրում են այս ողբերգութիւնը, տեսնում են այս ահաւոր պայքարը, այս թշուառութիւնը: <...> Կարելի՞ բան է, որ ներս գան և, մի մի Թամուրլան կտրած, կրկնեն այն, ինչ որ արել են Ռուսաստանում, Ղրիմում,

52 Տե՛ս **Գրիգոր Մարտիրոսյան**, Սևան. հայրենագիտական ակնարկներ, Եր., «Ապոլոն», 1998, էջ 205-207:

53 **Կոստան Զարեան**, Նաւը լերան վրայ, Պոսթըն, 1943, էջ 394:

Հիսիսային Կովկասում...»⁵⁴:

Նավի կանգ առնելը Քանաքեռի բարձունքին կատարվող իրադարձությունների բարձրակետն է. «Նաւը դարեր բեռնաւորաւծ երազ է»⁵⁵, և ահա այդ երազը այլևս անկարող է առաջ ընթանալ: Նավը կանգ է առնում, սկսվում է հայոց նորանկախ պետականության դրամայի վերջին արարը: Հիմա, երբ Հերյանը այլևս ֆիզիկապես զբաղված չէ նավով, կարծես ավելի պարզ, ավելի մոտ, ավելի հստակ է տեսնում ամեն բան: Քաղաքական ամեն մի տագնապալի լուր անցնում է նավապետի սրտի միջով: Տագնապալի, ահավոր լուրերը հաջորդում են մեկը մյուսին. «Կարսը, հսկայական այդ բերդը, իր ահագին պաշարներով, իր մեծաքանակ ռազմամթերքներով, իր անառելի ենթադրած ամրութիւններով, ընկել էր տաճիկների ձեռքը:

Կարսը ընկել էր: Ուրեմն՝ ամեն բան վերջացել էր, ուրեմն՝ Հայաստանի անկախութեան օրերը հաշուած էին»⁵⁶: Բոլշևիկյան քարոզները և մեր իսկ թուլությունն ու ապիկարությունը հասցնում են այն բանին, որ Կարսը առանց մի կրակոցի հանձնվում է բոլշևիկյան պրոլետարիատի եղբայր և բարեկամ թուրքին՝ մեր դարավոր թշնամուն:

Ժողովուրդը և երկիրը հայտնվում են ծայրահեղ հուսահատական դրության մեջ: Հանդիպում են Հերյանը, Պերոնյանը, բժիշկ Մարտիրոս Ուրանյանը, գրող Ստեփան Բանդունին: Ներկա է նաև ռուս Ֆյոդոր Պանտելենիչը: Նրանց երկար ու մանրամասն զրույցը՝ լի տագնապներով, ահով, անհանգստությամբ, հուսահատության հասցնող անորոշությամբ, բայց և ներքին հավատով ու լավատեսությամբ, ավելի հստակ է ներկայացնում ժամանակի, քաղաքական իրավիճակի և իրականության պատկերը, քան որևէ փաստագրական նյութ:

Իրերի բերումով Հերյանը հայտնվում է նաև ռազմական գործողությունների մեջ: Զարյանը հարյուրապետ Միրանյանի ջոկատի հետ պատահածը և Հերյանի՝ Կարմիր խաչի ջոկատում հայտնվելը պատկերում է ռազմական իրավիճակի զարմանալի հավաստիությամբ՝ կարողանալով փոխանցել ձակատամարտի և անկառավարելի քառսը, և զինվորների հոգեվիճակն ու հոգեբանությունը, և այն անհասկանալի, անբացատրելի զգացումները, որ ապրում է մարդը մահվան դեմ հանդիման: Պատերազմական մի դրվագը տրված է հարյուրապետ Միրանյանի հայացքով, մյուսը՝ պարզ քաղաքացի Արա Հերյանի ընկալումով:

Հետագա դեպքերը զարգանում են թավալգլոր արագությամբ: Հայաստանում հաստատվում է խորհրդային իշխանություն: Իշխանության հետ գալիս է սարսափը. «Գիշերը լափել էր Երևան քաղաքը: Մեծ, անհասկանալի մի գորութիւն, մէկ ժամից միւսը, յանկարծ, լափել էր Երևան քաղաքը և Հայաստան երկիրը»⁵⁷: Շուրջ բոլորը՝ ձերբակալություններ, աղքատ և թշվառ մարդկանց ապրուստի վերջին միջոցների բռնագրավում՝ բոլշևիկյան Ռուսաստանին օգնելու համար, ահ, ճնշվածություն, մահվան շունչ ու զգացողություն...

54 Նոյն տեղում, էջ 394:

55 Կոստան Զարեան, Մարդը և իր կղզին, «Նորք» ամսագիր, Եր., 1992, N 7-8, էջ 5:

56 Կոստան Զարեան, Նաւը լերան վրայ, Պոսթըն, 1943, էջ 397:

57 Կոստան Զարեան, Նաւը լերան վրայ, Պոսթըն, 1943, էջ 463:

Հերյանը իմանալով, որ «իշխանութեան կողմից» մարդիկ են եկել նաև և իրեն են որոնում, ոտքով ճանապարհ է ընկնում դեպի Վաղարշապատ: Շփոթահար ու սուկահար, ծանր ապրումների մեջ, լուսադեմին հասնում է Վաղարշապատի մոտերը:

Եվ վաղ առավոտի զովության ու թարմության մեջ, վիատված, իր անձն ու էությունը մոռացած Արա Հերյանի վրա հոգեկան պայծառություն է իջնում: «Արևելքի հրավառ բոցերի մէջ» նավապետին, երկնային տեսիլքի նման, ողջունելու են գալիս Արարատը և Հռիփսիմեն: Վեպի հետզհետե աճող, ահագնացող, իր մեջ նոր ու տարբեր ձայներ ընդունող երաժշտությունը այս հատվածում բարձրանում, ահագնանում և հասնում է իր ամենամեծ հնչողությանը:

Արա Հերյանը, ի վերջո, հասնում է այն բանին, ինչին ինքը այնքան հետամուտ էր՝ հայկական ոգու էությունը և ինքնությունը: Արարատը և Հռիփսիմեն խոսում են նավապետի հետ և խաղաղություն բերում նրա ակեղծված էությունը: Նրանք հայ հոգու հենարաններն են, հայկական ոգու բարձրագույն դրսևորումները:

«Նաուպետ Հերեանը կարտուզը հանեց, բարևեց Արարատին և բարևեց Հռիփսիմէին:

Նստեց պայուսակի վրայ և նայեց:

Յուզումի մեծ մի ալիք բախեց սրտին և նաձեց ամբողջ նրա անձը: Ամբողջ գիշերը քայլել էր, մինչ նայիր՝ ոչ մի յոգնութիւն չէր զգում: Աչքերը թարմ էին, և առաւօտը պաղ ձեռքերով լւացել էր իր երեսը:

Հայոց աշխարհի Պարոնը,– փսփսաց նա Արարատին նայելով: Ամեն ինչ սկսում է նրանով և ամեն ինչ վերջանում է նրանով: – Հայոց աշխարհի Մեծ Պարոնը...

Նորից կարտուզը հանեց և խոնարհեց:

Նայեց Հռիփսիմէին և յիշեց Միրանեանի մեկնումի գիշերույ խօսքերը:

Մեղեդիացած բոց, թաքնուած երգ, ներդաշնակութիւն, ճրագ: Տարակոյս չկար, Արարատը և Հռիփսիմէն Հայոց աշխարհի երկու այն հոգեկան բնեռներն էին, որոնց մէջ ընթանում էր ամբողջ մի ժողովրդի պատմութիւնը: Հայը գոյութիւն ունէր այնքան, ինչքան գոյութիւն ունէին նրանք»⁵⁸:

Փոքրաթիվ ժողովուրդը միշտ կարիք ունի իր ազգի ֆիզիկական և հոգևոր ուժերը միավորելու, ի մի բերելու, միասնականացնելու: Դա նրա գոյության անհրաժեշտ և թերևս միակ պայմանն է, միակ կենսաձևը: Առանց դիմադրողական ունակության իր գոյությունը ժամանակների մեջ ուղղակի անհնարին է: Եվ փոքրաթիվ ժողովուրդը ունենում է (պետք է ունենա) ազգի ներուժ կարողությունները միավորող և առաջնորդող գաղափար, մտածողություն, միտք: Այն երբեմն կարող է գոյություն ունենալ թաքնված ձևով, ընկալվել ներքնատեսորեն կամ, որոշ ազգերի օրինակով, լինել բացահայտ թմբկահարվող մտայնություն: Կոստան Զարյանը տեսնում է այդպիսի մտայնության անհրաժեշտությունը հայ ժողովրդի համար, մասնավաճաճ Մեծ Աղետից հետո, երբ հայության փրկված հատվածները շփոթահար են ու սուկահար և ցրված են աշխարհով մեկ: Գրողն ընդգծում է հայ ժողովրդի հավաքական ուժի գաղափարը: Այդ ուժը ստեղծում են Հայաստանի հողը,

58 Նույն տեղում, էջ 478:

երկիրը, բնությունը՝ Արարատը, և հայ ստեղծագործական հանձարը, իր ստեղծագործական ոգին՝ Հռիփսիմէն: «Հայը գոյություն ունէր այնքան, ինչքան գոյություն ունէին նրանք (Արարատը և Հռիփսիմէն.– Ե. Տ.–Խ.)»⁵⁹ նախադասությունը, քերականական իր ինքնօրինակ ձևով, իհարկե, նշանակում է՝ «Հայը գոյություն կունենա այնքան, ինչքան գոյություն կունենան նրանք»:

Այն պահին, երբ շուրջը կործանվում է ամեն բան, Արարատն ու Հռիփսիմէն մնում են կանգուն և պահում են ժողովրդին. ժողովուրդ են պահում: Հռիփսիմէն իր մեջ մարմնավորում–ներկայում է հայ ժողովրդի հազարամյակների ոգեկան ուժը. «Հէրեանը հասկացաւ, որ նոր իջնող ճառագայթների մէջ, յանկարծ, կենդանութիւն առած այդ տեսիլքը պարզ ճարտարապետութիւն չէր, քարերի ներդաշնակ շարածք և գծերի հոյակապ կառուցածք չէր միայն, և, ոչ էլ մեծ էր և խոր իր կրօնական հանգամանքի պատճառով, այլ մեծ էր և խոր, որովհետև նրա զօրութիւնը գալիս էր բնական երևոյթները զանց առնող ուրիշ մի աշխարհից, ուր ամեն ինչ պատճառաբանւած էր ինչ–որ բնականակալ տուեալներով՝ վերջնական, ակներև, ինչպէս աստղաբաշխական երևոյթները:

Եւ այդ հոգեկան չափին էին պատկանում նաև հեռուում կանգնած վեհաշուք լեռները՝ և լոյսերը, որ ահա լւանում էին նրանց, և դաշտը և այգիները և վեր սլացող կաղամախները և օդը իսկ, որ թրթռում էր բարակ և սառը պողպատի նման... <...>

Հիմա հասկանում էր: Հռիփսիմէն կառուցած էր հոգիով և ոչ քարերով: Հռիփսիմէն կառուցած էր հայ հոգու նրբագին շաղախով, արևային դիզլածություններով և մտքի վերջնական պայծառություններով»⁶⁰:

Այս հատվածը, ըստ իս, վեպի հարաձուն երաժշտության ամենագորեղ, իմաստուն և գեղեցիկ մասն է: Այստեղ է, որ Հերյանը հասնում է այն գերագույն ճշմարտությանը, ինչը իմաստավորում է իր կյանքը: Բարոյամից նա մի օր ձանապարհ էր ընկել այս ձայնի կանչով, անսալով Հայաստանում թաքնված մեծ իմաստի, հայկական առեղծվածի ու խորհուրդի գոյությանը, և այսօր հասել էր դրան:

Արա Հերյանը, անշուշտ, հայ ժողովրդի հավաքական կերպարն է, նոր հայի, երկիր կերտող և ամեն ինչ մեծ գաղափարին զոհող հայ մարդու մարմնացումը: Այս իմաստով է, որ Հերյանի կերպարը փիլիսոփայական և քաղաքացիական խոր բովանդակություն ունի: Նա, որ փնտրում էր հայ ոգին, հրաշալի մի փոխակերպությամբ, որ իր ապրած փորձությունների և իր կրած հոգևոր և ֆիզիկական տառապանքների ավարտն է՝ մի յուրօրինակ պայծառատեսություն, իր համար իսկ աննկատելիորեն, դառնում է այդ ոգու կրողն ու մարմնավորումը: Արարատ լեռան և Հռիփսիմեի հրաշքի բնականակալ ոգին այլևս իր մեջ է՝ «հեռաւոր ճամբորդութիւնների նաւապետ» Արա Հերյանի, որն իր նավը պետք է հասցնի Սևան: Հերյանը Վաղարշապատ է մտնում այլ մարդ դարձած: Հատկանշական է իր նոր հանդիպումը և գրույցը բժիշկ Ուրանյանի հետ: Վերջապես շատ կարևոր և իմաստալից է իր երրորդ՝ վերջին և նախորդների պես անակնկալ հանդի-

59 Նույն տեղում:

60 Նույն տեղում, էջ 478-479:

պումը խորհրդավոր հնդկահայի՝ Պետրոս Մարկի հետ: Հերյանի կերպարի, գիտակցության, կենսաընկալման վերջին ընդգծված շեշտը դնում է Պետրոս Մարկը, որին նա հանդիպում է երեկոյան, վանքում, կաթողիկոսների գերեզմանների մոտ... Պետրոս Մարկը հայտնվում է չգիտես որտեղից և խոսում է Հերյանին ծվատող ներքին, անխոստովանելի տարակույսների մասին, թվում է՝ անկապ բաներ է խոսում, բայց իր խոսքերի թաքուն իմաստը ուղղված է ներկա իրականությանը, Հայաստանի ներկա ծանր վիճակին («...չեն հասկանում, որ մարդկային մեծությունը ծնում է անդնդի եզերքին»⁶¹), մատնացույց է անում այն մեծ պատասխանատվությունը, որ պետք է ստանձնեն այդ իրավիճակի մեջ հայտնված հայերը, ինքը՝ Հերյանը. «Ապրում են աշխարհիս ամենանախախնամական վայրերից մեկում, ուր խաչածնում են հոգեկան հիմնական հոսանքները, ուր համադրում են լինելության ծածկած սկզբունքները, կազմում էական հիմնաքարերը, իսկ խօսում և գործում են այնպես, ինչպես խօսում են և գործում արևմտեան որևէ մգլոտած արարածանի բնակիչները... <...> Չեն հասկանում, կարևորը ազատագրելու թոփաքը չէ, այլ անհատի խորքը, այլ գալիք տեսիլքի կամքը, որ գոյանում է էություն մեջ քիմիական բաղադրության նման...»⁶²:

Սա Հերյանի ներքնատեսությունն է, նրա անբացատրելի ներգագնողությունը: Իր մտասուզումների ու հոգեկան տվյալանքների ծանր պահերին, որոնումի ու մտային անկանգ ընթացքի ճանապարհին նա հաճախ կորչում է ինքն իր մեջ: Եվ այդ պահերին է, որ նրան ձայն է գալիս: Պետրոս Մարկի ձայնը միշտ եղել է Հերյանի մեջ («...ձայնը միշտ ներկայ է մեջս, հեռուներից, շատ հեռուներից եկող մի ձայն»⁶³): Այդ ձայնը, այդ գիտակցությունը իր վերջին շեշտն է դնում Արա Հերյանի հետագա ճակատագրի վրա. «Մի խօսքով, էդ նախ հետ շատ բան է կապած, շատ բան... Չէ, ինչ էլ լինի, նաև անպատճառ պետք է հասցնեն Սևան... ինձ համար մահու-կենաց խնդիր է... Անպատճառ, անպատճառ պետք է հասցնեն Սևան...»⁶⁴:

Եվ Վաղարշապատից Հերյանը վերադառնում է Երևան, դեպի իր նավը: Երևանում այլևս խորհրդային իշխանություն է՝ իր ահ ու սարսափ ներշնչող գործունեությամբ: Գիտակցելով իրեն սպառնացող ֆիզիկական վտանգը՝ այնուամենայնիվ Հերյանը գալիս է իրագործելու իր հին, մեծ նպատակը:

Նոր իրականության բուն էությունն ու բովանդակությունը Ջարյանը ընթերցողին է փոխանցում անսպասելի ձևով, անսովոր եղանակով և գեղարվեստական մեծ փայլով: Նավը Երևան հասցնելու ճանապարհին հովվի մի շուն գալիս ընկերանում է Հերյանին: Հերյանը նրան նավ է առնում՝ «բարեկամ հոգի է», և հետը բերում Երևան:

Շունը ապրում է նավում Մարտինի, Ֆյոդոր Պանտելենիչի, Հերյանի և մյուսների հետ: Երբ Հերյանը հայտնվում է ռազմական գործողությունների մեջ և հետո գնում է Վաղարշապատ, շունը, որին Հերյանը տվել էր Ռիմ անունը, հեռանում է նավից. ո՛չ նավատեր կար, ո՛չ Հերյանը: Եվ ահա սկսվում են շան արկածները: Հերյանի բացակա ժամանակի դեպքերը,

61 Կոստան Զարեան, Նաև լեռան վրայ, Պոսթըն, 1943, էջ 487:

62 Նույն տեղում, էջ 487:

63 Նույն տեղում, էջ 489:

64 Նույն տեղում, էջ 491:

որոնք բոլշևիկների մուտքի և տիրապետության շրջանն են, տրված են Ռիմ շան հայացքով:

Այն, ինչ տեսնում է հովվական շունը, նախ, սկզբում բոլորովին անհասկանալի է թվում Ռիմին, և նա սկսում է զգուշանալ, հետո, երբ հասկանում է, թե ինչ է տեսածը, վախենում և ի վերջո պարզապես զարհուրում է. «Ռիմը, սարսափած, սեղմել էր պատին, գլուխը և հիւանդ թաթը տնկել դեպի երկինք և սկսել ոռնալ, ինչպէս ոռնում են, երբ վախենում են լուսնից:

Արիւնի և մեռած մարդի հոտ էր եկել:

Մինչև առաւօտ դողացել էր»⁶⁵:

Ռիմ շան կերպարը գրողի մեծ գյուտն է, ուղղակի հայտնագործություն: Հայ գրականության մեջ հրաշալի էջեր կան՝ գրված կենդանիների առիթով – կենդանիների հայացքով, մարդկանց մասին: Վեպի այս հատվածը ամենայն իրավամբ կարող է դրվել դրանց կողքին:

Հերյանը իր վիճակում այլ ելք չի տեսնում, քան դիմելու նոր իշխանության օգնությանը: Իր շուրջը եղած, իր օգնական անապաստաններից ոմանք, օրինակ՝ Միսակը, հակված են ապագան տեսնելու նոր իշխանության մեջ, որովհետև անհույս են և, վերջ ի վերջո, ուզում են ապրել:

Պարզվում է՝ նոր իշխանության մարդիկ իրենք են որոնում Հերյանին և ուզում են նրան հանձնարարել Սևանում նավագնացություն կազմակերպելու գործը: Նավապետը ստիպված դրոշակ է փոխում, հիմա կարմիր դրոշ է ծածանվում «Ալբատրոս»-ի կայմին: Այստեղ էլ, նոր իշխանության գրասենյակում, Հերյանը հանդիպում է Զվարթին: Զվարթը հիմա բոլորովին փոխված էր. «Ինչքան փոխւած էր և ինչ լաւ էր, որ այդպէս փոխւած էր: Պարզ, լուրջ, կարծես լուսաւորւած:

<...> Ծնւում էր նոր կինը, նոր հայ կինը: Ոչ թէ տառապանքներից ծաււած, ողբով և արցունքներով լեցւած հայ մայրը, այլ աւերներից և մոխիրների միջից վերածնւած՝ լուսաւոր ճակատով, իմաստուն աչքերով, հասկացող և քաջ սրտով կինը»⁶⁶:

Հերյանը նորից տեղափոխվում է նավ և իր օգնականների՝ անապաստաններ Միսակի և Վազգենի հետ տենդագին ձեռնամուխ է լինում լքված և ժանգոտած նավը կարգի բերելու, տեղափոխության պատրաստելու գործին: Շուտով վրա են հասնում փետրվարյան իրադարձությունները. հիմա նորից կրակում են նավի վրա, որովհետև հիմա էլ կարմիր դրոշ է ծածանվում կայմին: Հերյանը նորից հայտնվում է անելանելի և շատ վտանգավոր դրության մեջ: Ապստամբություն արած մարդիկ սպառնում են սպանել նավապետին՝ «իբրև կարմիրներին ծախւածի»: Մի քանի օր թաքնված մնալուց հետո ստիպված է լինում դուրս գալ: Հերյանը գնալու որևէ տեղ չունի: Եվ այնուամենայնիվ, հեռանում է քաղաքից, գնում է դեպի գյուղերը, դեպի ժողովուրդը, պարզապես տեղից տեղ է անցնում աննպատակ:

Իր այդ դեգերումները նրան միացնում–միասնականացնում են երկրին, և երկիրն ու Արարատ լեռը («Արարատը մագնիսի նման նրան քաշեց»⁶⁷)

65 Կոստան Զարեան, Նաը լերան վրայ, Պոսթըն, 1943, էջ 510:

66 Նույն տեղում, էջ 525:

67 Նույն տեղում, էջ 537:

նրան հանգեցնում են գերագույն ճշմարտությանը՝ իմաստություն և հոգեկան անդորր պարզևեղով միայնակ ու աստանդական նավապետին. «Նորից թափառեց Հայոց աշխարհի խանձածի հով արտաբուրող լերկ ժայռերի շուրջը և մրրիկներով ծեծւած լեռնալանջերում:

Հասկացաւ և միացաւ ձիւնին, քարերին, լեռներին: Եւ ինքն էլ եղաւ, ինչպէս ձիւն, ինչպէս քար, ինչպէս լեռ: Եղաւ թաքնւած ձայներով լեցւած մենա-կութիւն և ներքին կրակով այրող լերկութիւն:

Այլևս ոչինչ չէր վախեցնում նրան»⁶⁸:

Այս հատվածում վեպը հասնում է իր բարձրակետին և ընդհուպ մոտենում է ավարտին: Հերյանը իր մեջ արդեն ներքին անխախտ որոշում է կայացնում: Մնում է անել վերջին քայլը: Մի օր մի հեռավոր գյուղում երբ լսում է, որ բոլշևիկները նորից գործով գալիս են Հայաստան, որոշում է, ինչ ուզում է լինի, վերադառնալ Երևան: Երևան է մտնում Զանգվի կամուրջով և հանդիպում է քաղաքից փախչող խուճապահար բազմությանը: Պարտված իշխանության մարդիկ և իրենց համակիրները փախչում են դեպի Արաքս՝ գետը անցնելու և Պարսկաստան հասնելու նպատակով: Մի պահ, միայն մի կարճ պահ Հերյանը կանգ է առնում, մտածում-երկմտում է և բնագրական փորձ է անում միանալու փախչողներին: Խուռներամ բազմությունը փակում է կամուրջը, անցնելը դառնում է անհնարին: Հերյանը սպասում է, որ բոլորը անցնեն: Բոլորը անցնում են, շուրջը պարպվում է: Եվ հենց այդտեղ էլ գալիս-վրա է հասնում գերագույն և վճռական պահը.

«Երբ ամենքը անցան – այդ տևեց բաւականին երկայն – նա տեղից չշարժեց:

Նայեց յետ՝ այլևս մարդ չէր գալիս: Քաղաքը պարպւած էր: Հրացանների ձայները թնդում էին պարապի և ընդհանուր մեռելութեան մէջ:

Վերը, ժայռի վրայ, նաւը միշտ կանգնած էր: Անշարժ երկաթէ ծանրութեամբ: Յամառ, վճռական: Իսկ նաւի դիմաց կանգնած էին հայոց լեռները, որոնց գաղտնի կեանքը նա այլևս ճանանչում էր, ինչպէս առաջ ճանաչել էր ծովը»⁶⁹:

Նավապետ Հերյանը կատարում է իր վերջին քայլը, որ վեպի ավարտին տալիս է գերագույն իմաստ և բովանդակություն: Գրողը դուռը շրխկոցով փակում է անցյալի ողբերգական իրադարձությունների վրա և նոր դուռ է բացում իր հերոսի առջև: Եվ նավապետ Արա Հերյանը, իսկական հայր, հայոց լեռների գաղտնի կյանքը ճանաչած մարդը գնում է ճակատագրին ընդառաջ. նա մեծ պարտավորություն ունի երկրի, ժողովրդի և իր առջև:

Հերյանը «ձեռքերը գրպանը դրաւ և հանգիստ քայլերով բարձրացաւ քաղաք»⁷⁰:

* * *

Նավապետ Արա Հերյանի կերպարը Կոստան Զարյանի մեծ պատգամն էր և է՝ իր կտակը, մեծ ասելիքը, որ նա հասցեագրում է հայ ընթերցողին:

68 Նույն տեղում, էջ 546:

69 Կոստան Զարեան, Նաւը լերան վրայ, Պոսթըն, 1943, էջ 549:

70 Նույն տեղում, էջ 549:

Ի վերջո, Արա Հերյանը հայ ժողովրդի մարմնավորումն է, «հայ ոգու վերածնունդի» գաղափարի կրողն ու մարմնավորողը: Երկրից և հայրենիքից ակամա հեռացած հայը վերադառնում է հայրենի երկիր, վերադառնում է՝ դարձի ճանապարհին կորցնելով թանկ ու հարազատ շատ բան, վերադառնում է՝ անցնելով բազում փորձությունների, հոգեկան և ֆիզիկական տանջանքների ու տառապանքների միջով, վերադառնում է և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես: Դեպքերի, իրադարձությունների, ահի ու սարսափի, կորուստների և հայտնաբերումների այդ քուրայից, այդ հողմապտույտից նա դուրս է գալիս մաքրված, իմաստնացած, լուսավորված: Հեռավոր ճանփորդությունների նավապետ Արա Հերյանը Կոստան Զարյանի երազած հայն է, այն հին, հնագույն, նախնական բարձր ու վսեմ, հպարտ ու արժանապատիվ Արարատյան մարդը, որ վերածնվել է նավապետ Արա Հերյանի տեսքով, նկարագրով ու կերպարով:

* * *

Վեպը, անշուշտ, ունի նաև այլ արժանիքներ: Կարևորագույն առանձնահատկություններից մեկը Հայաստանի իրական և գեղարվեստական պատկերումն է: Հերոսը գալիս է Հայաստան, հոգեպես ընթանում է դեպի իր երկիրը: Բայց ի՞նչ է Հայաստանը, ինչպիսի՞ն է այդ երկիրը: Եվ գրողը պատկերում է Հայաստանը, երկիրը և ժողովուրդը ամենայն մանրամասնությամբ ու մեծ սիրով: Հոյակապ է Հայաստանի բնությունը՝ վեհաշուք, վսեմ, նախնական և խորհուրդներով լի: Սքանչելի են Կոստան Զարյանի բնապատկերները՝ իրենց գեղանկարչական ու բնագանգական ներշնչվածությամբ: Գրողը պատկերել է Հայաստանի գարունն ու ամառը, աշունն ու ձմեռը, պատկերել է բնության խաղաղ պահերն ու խռովահույզ վիճակները՝ անձրև, քամի, ձյուն, բուք: Պատկերել է երկիրը օրվա տարբեր ժամերին՝ առավոտ, կեսօր, իրիկուն, գիշեր: Բնապատկերները վեպում խորապես կապված են այուժեհ ընթացքին և գլխավոր հերոսի կերպարի զարգացմանը: Կոստան Զարյանը ձգտել է կերտել երկրի ամբողջական դիմանկարը՝ և՛ ֆիզիկական տեսքով, և՛ հոգեկան ներքին բովանդակությամբ: Վեպում չկա որևէ մանրադեպ ու միջադեպ, մանրամաս կամ տեսարան, որ նույն ձևով ուղղված չլինի գրողի հիմնական ասելիքին, վեպի կարևորագույն իմաստին և բովանդակությամբ:

Անշուշտ, մեծ արժանիք է հին Երևանի պատկերումը: Զարյանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքի մեջ տեսնում է երկրի խտացած նկարագիրը: Այս առումով «Նալը լերան վրայ» վեպը շարունակում է գրողի նախորդ՝ «Անցորդը և իր ճամբան», «Բանկօօպը և մամուլի ոսկորները» վեպերում մշակված մոտեցումը: Հին Երևանի մարդկանց կյանքի, կենցաղի ու նիստուկացի հյութեղ ու ճշմարտացի պատկերումը չափազանց արժեքավոր է մեր գրականության և մեր ժողովրդի հոգևոր կերպարի պատմության համար:

Եվ, վերջապես, վեպի մեծագույն արժանիքներից մեկը գրողի լեզուն է, որ վիպական իրադարձությունների հոսքն ու հորձանքը վերածում է ոգեշունչ, դրամատիզմով լեցուն և հագեցած, առանձին հերոսների մարդկային

և հոգեկան գեղեցկությանը փայլող ասքի, հերոսական ու ողբերգական սագայի:

Կոստան Զարյանի ըմբռնումով գրականությունը լեզու է: Եվ լեզուն է, որ կարող է առարկայացնել–իրական դարձնել ամեն բան, նույնիսկ ավելի իրական, քան իրականությունը: Գրողը, շարունակելով իր հարուստ արձակի լեզվամտածողության ձևը, բացահայտում է մեր լեզվի ներքին հարստության և գեղարվեստական ուժի նոր կարելիություններ: Վեպի հիմքում դրված սրբազան պատգամը թերևս կարելի էր արտահայտել միայն այդօրինակ խորապես բանաստեղծական և հուզավառ խոսքով: Այս առումով՝ վեպի բովանդակությունն ու լեզուն կատարելապես ներդաշնակ են:

Կոստան Զարյանի «Նաւը լերան վրայ» վեպը, անշուշտ, մեր նոր ժամանակների վիպասանության ամենանշանավոր երկն է:

* * *

Հայաստանում վեպը հրատարակվել է 1963 թվականին, Կոստան Զարյանի կամքից անկախ փոփոխված տարբերակով: Հեղինակը անմիջապես հրաժարվել է այդ հրատարակությունից և 1964 թվականի հոկտեմբերին իր ցավն ու դառնությունը, իր վերաբերմունքն ու վերջին կամքը, հստակ և ընդգծված, արտահայտել է օրագրային մի գրառման մեջ, որի հրապարակումը խորհրդային իշխանության տարիներին անկարելի էր նույնիսկ պատկերացնել. «Ես ուզում եմ իմացվի, որ «Նավի» երկրորդ հրատարակությունը լույս է տեսել ճնշման, խաբեության և սպառնալիքի տակ: Երկրորդ հրատարակության վերջին մասը բոլորովին ավելորդ է, ինչպես նաև շատ փոփոխություններ վեպի ներսում: Այդ մարդիկ, որոնք ներկայացան իբրև իշխանության ներկայացուցիչներ, շահագրգռված էին մանավանդ նյութապես: Պր. Գրիգորյանը ստացավ ավելի քան 2000 ռուբլի արտագրելու և, առանց ինձ հարցնելու, սխալ փոփոխություններ մտցնելու համար: Այդ շրջանին ես ապրում էի հոգեկան ճնշված վիճակ կնոջս հիվանդության պատճառով, և ոչ վեպն էր ինձ հետաքրքրում, ոչ ինչ որ անցնում էր իմ շուրջս:

Ես անշուշտ, պիտի նկարագրեմ մանրամասնորեն անց ու դարձերը, բայց սրանով ուզում եմ իմանան, որ իմ գրած վեպը այն է, ինչ որ տպված է արտասահմանում (շատ աննշան փոփոխություններով) և իմ մահից հետո, երբ արտատպեն, թող միանգամայն անտեսեն երկրորդ հրատարակությունը»⁷¹:

Վիպական ժամանակից՝ Արա Հերյանի նավը Երևան հասնելու ժամանակից մինչև հիմա անցել է գրեթե հարյուր տարի: Վեպի տպագրությունից ի վեր անցել է յոթանասուն տարի: Եվ նավապետ Հերյանի նավը այսօր էլ մնացել է Քանաքեռի բարձունքին: Կոստան Զարյանը ամենուր որոնում էր նավապետ Հերյանին և նրան առավելապես տեսնում էր մեր մեջ՝ գալիք սերունդների և ազատ, ինքնուրույն Հայաստանի մարդկանց մեջ: Եվ նավը այսօր էլ Քանաքեռի բարձունքին սպասում է նավապետ Հերյանին. Կոստան Զարյանի վեպը հասցեագրված–ուղղված

71 Կոստան Զարյան, Նավատոմար, Եր., «Սարգիս Խաչենց», 1999, էջ 567:

Է նոր ժամանակների Արա Հերյաններին...

Այս առումով՝ արդի հայ մարդու և հայության առջև դրված այս մեծ խնդրով ու այս մեծ պարտավորությամբ Կոստան Զարյանի «Նաւը լեռան վրայ» երկը մնում է իբրև հայ ամենաժամանակակից վեպը:

Երվանդ Գ. Տեր-Խաչատրյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են 20-րդ դարի հայ գրականության հիմնահարցերը: Ուսումնասիրել է հայ գրողների (Ինտրա, Կոստան Զարյան, Հրանտ Նազարյանց, Պարույր Սևակ) ստեղծագործական ժառանգությունը և առնչությունները այլ գրականությունների հետ:

Summary

NOVEL BY KOSTAN ZARIAN “THE SHIP ON THE MOUNTAIN”

Yervand G. Ter-Khachatryan

Key words – Ara Heryan, Batum, ship, mountain, Yerevan, Sevan, “Albatross”, Zvart, Tumanyan, Miranyan, Kanaker.

The article is devoted to the novel “The ship on the mountain” by Kostan Zarian – one of the major figures of Armenian literature of the twentieth century.

The novel was written just before the Second World War and was published in 1943, in Boston. The novel shows the difficult situation in Armenia and the Armenian reality in 1918–1920. The novel is the most significant work of the author, because it sums up the artistic expression of the sacred and revered idea of a thinker, artist and philosopher, an idea that was developed over decades, the idea concerning the fate and suffering of the Armenian people. His philosophy, his approach to the complex and unresolved issues of the Armenian reality are shown with the help of the main character of the novel – Ara Heryan. For this purpose, the article provides a detailed image of Ara Heryan. This image is the legacy of the writer, his testament for future generations.

The other characters of the novel are also quite significant – i. e. Petros Mark, Peronyan and others. It is extremely important that the readers may feel and see the image of life of Armenians at a concrete historical time – in 1918–1920.

As for the literary and artistic integrity of the novel, we would like to note the author’s artistic thinking, his poetics.

In this article, we took into account almost all the literary material relating to the novel, also some incomplete and one-sided interpretations. The author of the article made an attempt to read correctly the novel by Konstan Zarian and tried to interpret the idea and the implementation of the writer in a right way.

РОМАН КОСТАНА ЗАРЯНА “КОРАБЛЬ НА ГОРЕ”

Ерванд Г. Тер-Хачатрян

Ключевые слова – Ара Эрян, Батум, судно, гора, Ереван, Севан, “Альбатрос”, Зварт, Туманян, Миранян, Канакер.

Статья посвящена роману “Корабль на горе” одного из крупнейших представителей армянской литературы 20-го века – Костана Заряна.

Роман был написан незадолго до Второй мировой войны и опубликован в 1943 году, в Бостоне. В романе изображено сложное и тяжелое положение Армении и армянства в 1918–1920 годах. Произведение является наиболее значимым трудом автора, поскольку она суммирует разработанные в течение десятилетий сокровенные мысли и идеи Костана Заряна как писателя и как человека– мыслителя, художника и философа переживающего за тяжелую судьбу родины. Философия писателя, его подход к сложным и нерешенным вопросам армянской действительности максимально подробно отражаются с помощью образа главного героя романа – Ара Эрьяна. Образ Ара Эрьяна является завещанием писателя, его заветом для будущих поколений.

Весьма значимы и другие персонажи романа – Петрос Марк, Перонян и другие. Чрезвычайно важно художественное изображение исторического времени и армянских реалий в 1918–1920 гг.

С точки зрения целостности романа, хотелось бы отметить художественное мышление автора, его поэтику.

В статье принят во внимание почти весь литературный материал касающийся повести “Корабль на горе”, его неполные и односторонние интерпретации и т. д. Автор статьи постарался правильно представить основную идею писателя – веру в будущее Армении, основанную на глубоком патриотизме.